



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՀՈՎԱԿ

ԿՈՆԽՈԶԱՅԻՆ
ՊԱՏՄՎԱԹՔՆԵՐ



2-2325_a

2-2325_a

№ 17

ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ

№ 17

Ա. ՀՈՎԱԿ

ԿՈԼԽՈԶԱՅԻՆ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

A 7292



ՀԱՅ. № 22938

ՊԵՏԼՐՍ

1933

ՅԵՐԵՎԱՆ

Պետերբուրգի ազգային

Գլավիլիտ 7905, (բ)

Հրատ. 2348

Պատվեր 2752

Տիրույթ 2000

Մեքադրեց' Հ. Սուսիկյան

Հանձնված է արտադրության 22 սպետտեմբեր 1932 թ.

Մատրագրված է ապագրելու 13 ապրիլի 1933 թ.

Ա Ք Ո Ն

Արեւի ու հողի զաւակն ե Աթոն. նա չի հիշում իր հորը, մորը՝ յեթում ե մնացել, խալիսի դռներին, արեւի տակ, բաց հողի վրա:

Յերբ նրա ձեռքը ճիպոտա բռնեց՝ բատրակութեան մտով Հարեթի տանը: Յեկան, անցան տարիներ, հեղափոխութիւն կատարվեց, շատ բան փոխվեց կյանքում, սակայն Աթ: յի կյանքի պայմանները միշտ նույնն եյին մնում: Վորքան հասակ եր առնում, մեծանում եր, այնքան շատանում եր նրա գործն ու դժվարանում: Հերկին գիշեր ու ցերեկ գութանի վրա յեր աշխատում, հերկից հետո բահն ուսից ցած չեր առնում. ջրվոր եր՝ մինչև դերանդին վերցնելը: Գերանդին ցած եր դնում, յեղանն եր ձեռքն առնում՝ մինչև կալից պրծնելը. աշնանացանքից հետո վերանորոգում եր մասուրները, գոմի ողեն, պատրաստում եր անասունների կապերը, իր բելմե անկողինը, ձմեռն ապրում եր անասունների հետ, տաքանում նրանց շնչով, մինչև դարնան տաք արեգակը բաց եր անում դաշտերի յերեսը: Աթոն դուրս եր գալիս գոմից անասունների հետ, դիշերում եր դաշտում,

աշխատում հողի վրա, շարքաշ յնդներէ հետ,
այրող արևի տակ: Աթոյի աշխատավարձը մի
փոք հաց եր, իր մերկ մարմինը ծածկելու հա-
մար՝ խաղեյինի հին շորերը: Աթոն չեր դժգո-
հում «իբ կյանքից»: Մարդը ծնվել է աշխա-
տելու համար, — մտածում եր նա: Իր կյանքում
վոչ սրբի դուռ եր դնացել, վոչ ել բժշկի. այդ
չեր նշանակում, վոր Աթոն յերբեք չեր հիվան-
դացել: Ետ ծանր հիվանդութեան հետևանք
եր նրա ականջների ծանր լսելն ու լեզվի թլվա-
տութեանը: Յեթե այդ պակասութեանները
չլինեյին, Աթոյին շատ աղջիկներ կ'սիրեյին.
նա առողջակաղձ, գեղեցիկ յերիտասարդ եր,
նրա բաց նակատի խորշոմների մեջ կարդաց-
վում եր շարքաշ աշխատանքի կնիքը, վորը
շարժում եր տեսնողի գուլթն ու համակրանքը,
նրա աչքերում արտահայտվում եր դաշտերի
պարզութեանն ու բարիքը, և իսկապես, շատ
պարզ ու անմեղ բնավորութեան ուներ Աթոն.
ստախոս, գող, հարբեցող մարդկանցից վոչ
բարև կառներ, վոչ ել բարև կտար. ընդհան-
րապես նա շատ քիչ մարդկանց հետ եր խոսում
և վոչ մի մարդու հետ մտերմութեան չուներ.
նրա մտերիմներն իր աշխատանքի ընկեր յեզ-
ներն եյին, անշունչ գործիքները, վորոնց խնա-
մում եր աչքի լույսի պես:

Աթոն բացարձակապես կարմաժ եր գրափ
աշխարհից: Գյուղի կազմակերպութեանները՝
կոմսոմոլը, գյուղանտառ միութեանը փորձե-
ցին Աթոյին կապել իրենց հետ, բան դուրս չե-

կամ: Նրանց ասածների վրա Աթոն մտածում
եր ու պատասխան չեր տալիս:

Ամեն ինչ անսպասելի յեղամ, շատ բան
փոխվեց Աթոյի շուրջը մի որվան մեջ: Հարե-
թի ձեռքից ամեն ինչ առան ու գյուղից հե-
ռացրին: Մանր-մունր անասունները գոմից
տարան ու նրանց փոխարեն յեղներ բերեցին:
Հարեթի ամբարներից մեկում հավաքում էյին
կոլխոզի սերմացուն, և մյուսում՝ գործիքնե-
րը: Աթոն մի անկյունում առանձին դարսեց
Հարեթից վերցրած գործիքները, վորոնց հետ
ինը տարի յեք, ինչ ինքն աշխատում էր:

Այն սենյակը, ուր միայն Հարեթն էր
մտնում ու պատվավոր հյուրերին էյին ընդու-
նում, դարձրին գրասենյակ և որը հարյուր
տեսակ մարդ էր մտնում ու դուրս գալիս:

Աթոյին գոմում ողնող ընկեր էյին տվել:
Աթոյի համար այդ այնքան էլ հաճելի չեր:
առանց նրա էլ Աթոն կարող էր քսան յեզանը
խնամել հարկ յեղածից դեռ ավելի:

Աթոյի շունը, Չուլոն, շատ անհանգիստ
էր բախում ներս ու դուրս անող անծանոթ
մարդկանց հանդեպ և միշտ կովի յեր բռնվում
նրանց հետ, այնպես, վոր Աթոն ստիպված էր
նրան կապել:

Աթոն յերբեմն տխրում էր, վոր իր խազեյինին
հեռացրին: «Ինչ պիտի լինի սրա վերջը», —
մտածում էր նա և յերբեմն էլ դիմում Չուլո-
յին: Չուլոն պոչը շարժում էր ու մեջքը քսում
Աթոյի ծնկներին:

— Լամ կլինի, Ձուլո ջան, լամ կլինի,
պարապ չենք մնա, կաշխատենք, — մրմուռ
եր նա ու շոյում ջան գլուխը:

Մի իրիկուն Աթոյին կանչեցին գրասեն-
յակ: Ինը տարի յե Աթոն այդ տանն աշխատում
եր, ինն անգամ այդ գրասենյակը չեր մտել:
«Անշուշտ սրտ տակ մի վատ բան կ'լինի,»
գլուխը քորելով գոմից դուրս յեկավ Աթոն:

Կոլխոզի նախագահը նախ հանդիմանեց
Աթոյին, վոր կոլխոզի գործերով իսկի չի հե-
տաքրքրվում: «Ի՞նչ ե ասում», — լամ չլսելով
նախագահի խոսքերը, մոտիկ կանդնած
մարդուն դիմեց Աթոն, ականջը դեմ անելով
նրա բերնին:

— Ասում ե՛ ինչի՞ իսկի գրասենյակ չես
գալիս, չես հարցնում՝ ի՞նչ ենք անում, ի՞նչ
ե քեզ պետք:

— Ե՛, ձեր ջանը սաղ ըլնի, — դիմեց նա
նախագահին — ձի մի աշխատել ա համում:

— Լսիր Աթո, — խոսքը փոխելով, լուսամու-
տից վեր կացավ ու մոտեցավ Աթոյին նախա-
գահը, — տեսնո՞ւմ ես ես Կարոյին, — ցույց
տվեց նա գրասեղանի մոտ նստած կոլխոզնի-
կին, — եզուցվանից դու գրանց տանը հաց կու-
տես: Ձրի չե հա՛, չվախենաս, չամաչես: Մենք
քո աշխատավարձից տալիս ենք դրան: Բան
ա, թե վոր քեզ սոված կթողի, կդաս ինձ կա-
սես, իմացա՞ր:

— Աթոն ծպտաց ու գլուխը թեքեց մի
կողմ:

— Հասկացա՞ր Աթո, եղպես յուր կերթաս, մինչև քեղ կպսակենք, — Աթոյի ուսին խփելով, նախագահը գնաց նստեց իր տեղը: Աթոն ժպտաց մի ժպիտով, վերն ասում եր՝ «ինձ ձեռք մի տուեք»:

— Կարո՛, կարող ես սա ամաչի, չգա. մի քանի որ հետդ կտանես, — ցածր ձայնով Կարոյին դիմեց նախագահը:

— Առավոտյան կգամ, կերթանք մեր տուն, — Աթոյի ականջին բղավեց Կարոն, թիթղթի կտոր գրպանը դնելով, դուրս գնաց:

Հաշվապահն Աթոյին ձեռքի նշանով համեցեք արեց Կարոյի նստած աթոռին: Աթոն թեթև նստեց աթոռի վրա, վախենալով կոտորովելուց:

— Առ ես շապիկն ու շալվարը, յերկուսին ութ մանեթ քառասուն կոպեկ ենք տվել, ես ել մի զույգ տրեխացու կաշի՝ յերկու մանեթ յերեսուն կոպեկ, ես ել քեզ հինգ ուրբլի փող, վոր սապոն առնես, շորերդ վանալ տաս, դալարքի տաս, մի խոտքով ձեռքի խարջիլը: Ես բոլորն ես տեղ գրել եմ, — համբիշի վրա հաշվապահը ցույց տվեց զցած դումարը, կտորներն ու կաշին հրելով դեպի Աթոն: — Ես տալիս ենք քու աշխատավարձի դիմաց. եստեղ ել պիտի ստորագրես, — հաստ մատյանի մեջ մի դիժ ցույց տվեց հաշվապահը: Աթոն գրչակոթը ձեռքն առավ ու շուրջն եր նայում:

— Ստորագրել չդիտե՞ս, — հարցրեց հաշվապահը:

Աթոն գլուխը բացասաբար որորեց:

— Այ, սրան եմ տալիս քո փոխարեն ստորագրի, — հաշվապահը գրչակոթը տվեց սեղանի մոտ կանգնած կոլխոզնիկին: Աթոն առաջին անգամ պիտի նոր կտորից շոր հագներ, գրպանը փող դներ: Մեկ ուզեց հնգանոցը չվերցնի, մեկ ել վախեցաւ, վոր հաշվապահը բարկանա, քանի վոր նրա խոսելու ձևից յերևում եր, վոր պարտադիր 'ե վերցնելը: Աթոն հնգանոցը խրեց փափախի ծալը, թևի տակն առաւ շորերն ու մտածելով, դուրս գնաց: Աթոն նախ զարմանում եր, թե ինչու ստորագրել են տալիս, և իր ինչին ե պետք, թե քանիսով են առել, մեկ ել ինքը հո խաղեցին չի, վոր ձմռան որով իր շորերն ուրիշին փողով լվանալ տա. նա իր կյանքում ձմեռը շոր չի լվացել, ամբողջ ձմեռը նա իր շորերը չեր լվանում, հենց վոր գարունը բացվում եր, վրայի շաւար-բլուզը անձեներն եյին լվանում, իսկ շապիկ-վարտիկը, յերբ յեղներին լողացնելիս թրջվում եր, ստիպված եր լինում հանել ու անսապոն՝ սառը ջրով մի քիչ լվանալ: Յերբեմն պատահում եր, վոր առանց նման պատճառի պարապ որերին (իսկ նրա պարապ որը համարվում եր տավար արածեցնելը) լվանում եր: Ձմեռը շոր լվանալ տալը շատ տարբրինակ եր Աթոյի համար, նամանավանդ փողով:

Գարնան դաշտային աշխատանքներն ակնվում եյին, կոլխոզի նախադահը նոր գնած յեղները հանձնեց Աթոյին ու ասաց, — Աթո,

այս յեզնեքը քոնն են, դու կրանացնես ու կապ-
հես, դու յես պատասխանատու, դե հիմի քեզ
տեսնենք, Աթո:—Աթոն սրտանց ժպտաց ու մո-
տեցամ նախագահին, ուզում եր մի բան ասի,
բայց ենպես ել շասաց:

Այնուհետև կոխողին ու գյուղին հայտնի
եյին Աթոյի յեզնեքը,՝ Ասլանն ու Մլջանը,
ինչպես ինքն եր անվանում նրանց: Ճիշտ է,
Աթոն ծանր եր լսում, բայց այնպես չեր խո-
սում, վոր ինքը լսի, համարյա թե փսփսում
եր նա իր յեզնեքի հետ,—Ասլան Չան, դե՛,
Մլջան Չան, դե՛,—այսպես դիմելով նրանց:
Յերբ Աթոն վար եր անում, Չուլոն—նրա հա-
փատարիմ շունը նստում եր արտի աիը, այն
իրերի մոտ, վոր դնում եր Աթոն: Չուլոն իր
աիրոջ լիակատար վսահությունն եր վայե-
լում. գիշեր լինեք, թե ցերեկ, Աթոն բոլոր
իրերը կթողներ արտը՝ Չուլոյի պահակության
ներքո, ինքն Ասլանին ու Մլջանին կտաներ
Չրելու կամ արածեցնելու: Չուլոն Աթոյի
անփոխարինելի հավատարիմն եր ու ոգնակա-
նը: Գյուղում չկար մի շուն, վոր Չուլոյի
բարձր ձայնն ունենար: Վորտեղից վորտեղ
վտանգի դեպքում Չուլոն իր ձայնով հայտ-
նում եր Աթոյին: Յեթե Աթոն հացը բաց թող-
ներ նրա մոտ, Չուլոն չեր մտածի հոտոտալ.
Արոն առանց Չուլոյի բաժինը տալու պատառ
չեր տանի բերանը: Չուլուն այն աներես շնե-
րից չեր, վոր իր բաժինն ուտելուց հետո, մո-
տենար հացին՝ պոչը շարժելով կանգնեք ու նա-

յեր, մեկ-մեկ ել անշնորք կերայով թաւը կու-
տար: Վոչ, Չուլոն լավ գիտեր Աթոյի խիստ
քնաւորությունը, իր բաժինն ուտելուց հետո
գնում էր Ասլանի ու Մլջանի մոտ, յեթե նրանք
քիչ հեռու արածում էին, մինչև Աթոն վեր-
ջացներ հացը: Եների հետ, թե շնային խնդիր-
ներում և, թե առհասարակ կռիւլ բանալու
առիթ չեր տա Չուլոն, վոչ թե նրա համար,
վոր ուժը չեր պատի կամ վախենում էր, վոչ,
բանի տեղ չեր դնում: Պետք է ասել, վոր մի
քիչ ել բարձրահոգի յեր Չուլոն: Եերբ նա
Աթոյի հետ յերեկոյան գյուղ եր մտնում, կամ
լուսադեմին գործի գնում, Ասլանի ու Մլջանի
վտանաձայնին շնորք հարայ հրոց եյին բար-
ձրացնում, կտրներից, բակերի դռնից հաջում
եյին, Չուլոն վոչ մեկին չեր նայում, իր հաստ
պոչը ոլորած մեջքի վրա, հպարտ քայլում էր
Աթոյի կողքով, բայց վայ են շանը, վոր կհա-
մարձակվեր մի բան գողանալ, ուտելու նպա-
տակով, Չուլոյի հսկած բակը կ' մտներ, բուրդը
քամուն կտար: Գյուղի բոլոր գող շները ճա-
նաչում էին իրենց թշնամի Չուլոյին. նրան-
ցից վոչ մեկը չեր կարող պարծենալ, թե Չու-
լոյի բակից մի հին տրեխ է գողացել:

Չուլոն ծանր, չափավոր ու խիստ քնաւոր
բություն ուներ, մանր-մուկ բաների վրա հա-
ջել չդիտեր, չեր անհանգստացնի Աթոյին այն-
պիսի գործերի համար, վոր ինքը կարող եր
վերջացնել: Որինակ, շուն կա, վոր ահագին
աղմուկ կբարձրացնի, բակում փռած կաշի

կամ մորթու վրայից՝ մի կաշաղակ կամ կատու
հեռացնելու համար, բայց Չուլոն այդպես հի-
մար բան չեր անի. սուս ու փուս կմտտենար,
և յեթե մինչև հասնելը կատուն չեր փախչի,
իր պատիժը կստանար: Չուլոն չեր ձայնակցի
լուսնի վրա հաշող վիսկոններին կամ յերազից
վախեցած քաղթառ շներին: Կարիք չկա ասե-
լու, թե ինչպես եր Աթոն վարձատրում Չուլո-
յին: Աթոյի յերջանակությունն իր յեզներն ե-
յին ու Չուլոն. անտարբեր եր դեպի կոլխոզի
ներքին կյանքը: Ժողովներ եյին լինում, խոսում,
եյին տնտեսության վեր ու դիրքի մասին, դա-
ռակարգային թշնամու մասին... Աթոյին ինչ,
նա լավ եր նայում իր բանեցած գործիքներին,
լավ պահում Ասլանի ու Մլջանի բողազը:

Մեծ յերջանակություն եր Աթոյի համար,
յերբ մութ գիշերին Չուլոյի հեռակից անծա-
նոթ ճանապարհով Ասլանն ու Մլջանը սայլն
անվնաս տուն եյին հասցնում, կամ յերբ դժվար
տեղի պատահելիս, ուրիշ սայլվորներ հարայ-
հրոց եյին բարձրացնում, մինչև իրենց յեզները
սայլը հանեն, իսկ ինքը բավական եր, վոր
ասեր «Ասլան ջան, դե՛, Մլջան ջան, դե՛», այդ
դեպքում յեթե նույն իսկ Մլջանը ջանպահու-
թյուն աներ, Ասլանը մենակ սայլը կհաներ:

Աթոն վոչ ուրախանում եր կոլխոզի հա-
ջողություններով, վոչ ել տխրում անհաջողու-
թյուններից, ավելի շատ այդ մասին իսկի չեր
ել ուզում իմանա: Այն ժամանակ եր նա բարձր
տրամադրության մեջ, յերբ իր Ասլանն ու

Մլջանը անհաղթի պատվով ելին յերևում գյուղի և կոլխոզի բոլոր յեղների մեջ:

Մրցման մեջ Աթոյի պարծանքը Ասլանն էր, դրա համար նա շատ էր սիրում Ասլանին: Նա Մլջանից մի չորս մատ ցածր էր, բայց հաստ էր ու մեծա-վոսկր, ճակատը լայն ու պոզերը թեքված դեպի ականջները, թե սայլի տակ և թե ընդհանրապես, Մլջանից դանդաղ էր քայլում՝ շրջապատին անտարբեր հայացքով, բայց չէր պատահի, վոր Ասլանը սայլը ճանպարհից հաներ կամ կպցներ ուրիշի սայլին: Ջուր մտնելիս վոչ քայլերն էր դանդաղեցնում, վոչ ել պոչը բարձրացնում: Մլջանը համեմատաբար դեղեցիկ տեսք ուներ, թեկուզ սոված ժամանակ խոտն ուտելիս ընտրություն էր անում, ծանոթ թե անծանոթ միջավայրով քայլելիս իր փայլատակող մեծ աչքերով անդադար դես ու դեն էր նայում, և յերբեմն խրտնում դատարկ բաներից: Ջուր մտնելիս պոչը բարձրացնում էր ու վոտները դանդաղ և զգուշ փոխում, վոր ջուր չթրցնի իրեն: Իրա համար ել Աթոն Մլջանի մականունը դրել էր «Որիորդ», իսկ Ասլանին «Թամբալդադե»:

Սակայն այս մականունները Աթոն խիտազգուշ էր գործածում, այն դեպքում միայն, յերբ Ասլանն ու Մլջանը նրան բարկացնեյին և շուրջն ել ուրիշ լսողներ չլինեյին: Հազվադեպ էր պատահում, վոր Աթոն առանց յեղների գործի գնար. յեթե պատահում էր, նրանց խոտ

ու շուրջ տալիս եր, Չուլոյին ել թողնում եր
նրանց մոտ՝ վորպես պահակ:

Սրեգակը բարձրանում եր յերկնակամարի
վրա, գոմի դռան ստվերը կարճանում եր,
յերդկից ներս ընկած շողքն ստանում եր ուղղա-
ձիգ դիրք: Չուլոն գլուխը դրած թաթերին,
ննջում եր, մեկ-մեկ ճռռումներ կոլխոզի բակի
դուռը՝ ծանոթ տեսքով մարդիկ մտնում-դուրս
եյին դալիս. Չուլոն հայացքով հետևում եր
նրանց մինչև բակի դռնից դուրս գալը, ու ելի
նորից աչքերը թարթում:

Գրասենյակում նստած է միշտ ենտեղ նրա-
տողն ու ինչ վոր բան է շղկշղկացնում, խան-
դարելով Չուլոյին քնի մեջ խորանալու: Ասլանն
ու Մլջանը հանգիստ նստած վորոճում են: Մեկը
թեթեմ քայլերով, ծանոթ հոտով բակ մտավ:
Չուլոն աչքերը բաց արեց. գոմից լավեց Ասլանի
ու Մլջանի վոտնածայնը՝ անորինակ իրար ան-
ցումով: Չուլոն ուզեց հաջոցով վազել դեպի
գոմը, բայց լակոտություն համարեց հաստատ
չիմացած բանի վրա հաջելը, առանց հաջոցի
վազեց գոմը: Ծանոթ մարդը դուրս յեկավ,
արագ քայլերով դիմեց դուրս: Նրա վրայից
Չուլոն արյան հոտ թռավ: Գոմում ինչ վոր
անկարգություն կար ու այդ արյան հոտը խիստ
ուժեղ եր, բայց Չուլոն վախկոտություն հա-
մարեց կոխկոճալ չար դավադիր գործի վրա.
Հոտոտելով, հեռացող մարդու հետքը մինչև
փողոց, լավ ստուգեց, մըմռալով յետ դարձավ:
Յեթե այդ մարդը ծանոթ չլիներ, Չուլոն փողո-

ցում ել նրա բուրդը քամուն կտար... արյան
հոտը Չուլոյին հանգիստ չե տալիս, նա նորից
դոմ մտալ, հոտոտաց Ասլանին, Մլջանին ու
Աթոյի հետքը բռնելով, վազեց: Աթոն բահը
ուսին առվի ափով ցած եր իջնում, յերբ Չուլոն
լեզուն հանած, սկսեց մեջքը քսել նրա ծնկնե-
րին:

— Յեզներին տեղ են տարել կամ մի բան ե
պատահել, գուշակեց Աթոն Չուլոյի վարձուն-
քից ու շտապեց տուն: Գոմ մտնելով, նա իրան
կորցրեց, չեր հավատում աչքի տեսածին, նրա
լեզուն ավելի կակազեց. յետ-յետ գնաց ու
նստեց մսուրում: Չուլոն մտալ նրա վոտքերի
արանքն ու գլուխը դրեց դիրկը: Մլջանը մո-
տենում եր Աթոյին, Չուլոն քթի տակ մրմռում
եր, սակայն Աթոն վոչ Մլջանի վոտնաճայնն եր
լսում, վոչ Չուլոյի մրմռոցը: Մլջանն սկսեց
լիզել Աթոյի թաց տրեխները: Աթոն նայեց
Ասլանին, վոր խռովածի պես քաշվել եր դոմի
անկյունը. նրա կողքի վերքից արյունը մազերի
վրայով գլլգալով, իջնում եր ցած ու կաթում
գետին: Ցավից կծկվել եր Ասլանն ու ցցվել
եյին մեջքի մազերը: Չուլոն նայում եր Աթո-
յին ու հասկանում, վոր նրա տխրության պատ-
ճառն այդ արյան հոտն է...

— Չուլո, ով խիեց Ասլանին, — շոյեց նա
չան գլուխն ու արցունքները կաթեցին նրա
աչքերից... Արցունքները կաթում եյին ու նա
չչնջում եր— Չուլո, ո՞վ խիեց...

Արեգակն իջնում եր սարի յետևը, բուլոյն

եւ աշխատանքից տուն եյին դառնում: Լուրն՝
արդեն տարածվել եր գլուղում, վոր Աթոյի
Ասլանին խփել են: Կոլխոզնիկները մեկ-մեկ
մանում եյին գոմը, նայում Ասլանին և գլուխ-
ներն որորելով դուրս եյին դալիս: «Ո՞վ արած
կլինի», վորոճում եր նրանց միտքը: Աթոն
նստած եր բակում կանգնած դատարկ սայլի
վրա, իսկ Չուլոն կանգնած եր նրա վոտների
առաջ: Հանկարծ Չուլոն սլկացրեց ականջ-
ներն ու սկսեց հոտոտալ: Բակի դռնից ներս
մտավ կոլխոզնիկ Մզլոն. Չուլոն վրա պրծավ
ու սկսեց իր ժանիքներով պատառոտել նրա
չորերն ու մարմինը: Մզլոն ուղում եր գրպա-
նից դանակը հանի՝ Չուլոյին խփելու, վոր Աթո-
յի հարվածներն իջան նրա գլխին, կոլխոզնիկ-
ները վրա հասան Չուլոյին ու Աթոյին հեռաց-
րին՝ գետին փոված Մզլոյի վրայից:

— Թողեք, դա յե խփել Ասլանին, Չուլոն
սուտ չի ասում, — գոռում եր Աթոն, իսկ Չուլոն
հաջում եր և սպառնում քրքրել Աթոյին բրո-
նոզներին: Ամեն ինչ հանդարտվեց, համապա-
տասխան արձանագրություն կազմեցին ու
Մզլոյին ուղարկեցին շրջան:

— Ճիշտ ե ասում Աթոն, դա խփած կլինի
Ասլանին, եղ ուրիշ տիպ ա, կոլխոզ մտել ե,
վոր մոտեթը ծածկի, — խոսում եյին կոլխոզ-
նիկները Մզլոյի հասցեյին:

— Ախր ինչու պետք ե Մզլոն խփեր Ասլա-
նին, հը, Չուլո, դուշման ա ընձի, հա՞, — շո-
յում եր Չուլոյի գլուխն ու հարցնում: Աթոն

Ասլանին մորթելու որը պետի ապին մթնա-
 ցրեց: Չբաղմունք չունենալով, նա իր շորերը
 լվաց ու Չուլոյի հետ քնեց զով ուռնիններէ
 տակ: Արդեն մութն եր՝ քնելու ժամանակ,
 յերբ Աթոն Չուլոյի հետ մտավ կոլխոզի բակը:
 Նախ ախորժակ ու տրամադրություն չուներ,
 յերկրորդն ել անհարմար համարեց այդ ժամին
 հարոյի տուն գնալ: Հաց ուտելու համար:
 Չուլոն իր անանում մի պատառ փափուկ հաց
 դտավ, շատ սոված եր, մի բերան արեց, առանց
 ծամելու կուլ տվեց, հենց այդ կուլ տալու հետ
 նրա կուրծքը խոքքից մի բան ծակեց: Շատ հա-
 զաց Չուլոն, բայց ծակոցը թանի գնաց, սաստ-
 կացավ: Առաջտայան Աթոն Չուլոյին բակի
 անկյունում կծկված հազալիս գտնելով, իս-
 կույն նայեց թաթերին, բերանը, կարծելով,
 վոր գուցե վոսկոր ե կանգնել կոկորդին կամ
 շատ ե կերել Ասլանի աղիքներէց: Բայց վոչ,
 այդպես մտածել էյին Չուլոյին ասեղ տվող-
 ները, վոր հարմար առիթ ե, կկարծվի թե
 վոսկոր ե կուլ տվել: Աթոն այդպես մտածելու
 իրավունք չուներ: Նայեց Աթոն, նայեց Չու-
 լոյին. «Ասեղ են տվել», — ընկավ նրա շրթունք-
 ներից անիրավ ճշմարտության ծանր բառերը,
 թեքվեց Աթոյի գլուխը, նա կուացավ, գրկեց
 Չուլոյին. հազալիս բարձրանում — իջնում
 էյին նրա մեջքի մազերն ու կանում Աթոյի կզա-
 կին: Աթոյի աչքերում արցունք չեր գոյանում,
 այլ բոցավառվում եր ատելություն, բայց ո՞ւմ
 դեմ — չգիտեր:

Ո՞վ է իմ թշնամին, վոր Աւլանին սպանեց:
Մզլո՞ն: Ինչո՞ւ. իսկ ո՞վ ասեղ տվեց Ձուլոյին,
ի՞նչ եմ արել յես Մզլոյին, մտածում եր
Աթոն: Ձուլոն, անդադար հազում եր, նրա աչ-
քերի մեջ ասկայծում եր մարվող կենդանու-
թյան վերջին կրակը: Շատերին թվում եր, թե
Աթոն ավելի պիտի կտրվի կոլխողի ընդհանուր
հասարակական կյանքից, բայց հակառակը
դուրս յեկավ:

Աթոն մտածում եր, թե ինչու ինքը թշնա-
մի ունի, թե ինչու Ձուլոյին «ասեղեցին» ու-
այդ հարցին նա սրտասխան եր վորոնում
մարդկանց մեջ, նա կոլխողի ղեկավար ընկեր-
ներից հարցնում եր, թե Մզլոն ինչ թշնամու-
թյուն ունի իր հետ: Նրա աչքերը նոր իմաստ
ու նոր փայլ եյին ստանում, նա հասկանում եր,
թե ինչ է դասակարգն ու ժպտում եր նա, յերբ
հիշում եր ընկերների ասածը, վոր պետությու-
նըն իրենց դասակարգի ձեռքն է, վոր Մզլոյին
խիտ պատիժ կտան:

Աթոն ավելի ու ավելի յեր հետաքրքրվում
կոլխողի քաղաքական կյանքով. արդեն վոչ վո-
քի համար տարորինակ չեր Աթոյին ժողովում
տեսնելը:

Աթոն արդեն սովորել եր, թե ինչու, յեթե
ինքն անդամ մըջյուն շտրորի, ելի հազարա-
վոր թշնամիներ ունի, և այդ թշնամին նման
չի մինչ այդ իր հասկացած «թշնամուն» և
դրա համար ել այդ թշնամու դեմ ինքը շատ
ու շատ ընկերներ ունի:

ՀԱՅ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՕՍԿԱՐԱՆԻ
ՔՈՒՆԱԿԱՆ

Որևոր Աթոյի դեմ ջից չքանում եյին հնա-
զանդութեան խոնարհ գծերը, վորոնք նայողին
ասում եյին, վոր սա պատրաստ ե հրամաններ
կատարելու, և ընդհակառակը՝ այնպիսի տեսք
եր ստանում, վորն ասում եր-սա պատրաստ-
վում և իր կամքը թելադրելու ուրիշին: Աթոն
ամեն ինչի վրա նայում եր խիստ ու զննող հայ-
ացքով, նա սովորում եր, վոր ինքը մեծ դասա-
կարգի վորդի ե, այդ գիտակցութեանը նրան
կամք ու հպարտութեան եր տալիս:

1931 թ.

ԻՄ ԸՆԿԵՐ ԳԵՎՈՆ

(Ազատին ու Վաղոյին)

— Խեչո ջան, Մելոյենց տուն կգնա՞ս:

— Ինչո՞ւ, — հարցրի տատիս.

— Նրանց տավարը հանդը տանես:

— Ինչո՞ւ պիտի յես տանեմ Մելոյենց տավարը. բա նրա թուը՝ Շավարշն ի՞նչ է:

Տատս դուը ժպտաց իմ պատասխանի վրա:

— Ախր հաց չունենք, բալա՛, ի՞նչ կուտես:

Մի շաբաթ անցած այդ որից, առավոտյան սովորականից վաղ տատս վեր կացրեց ինձ:

— Գնանք Մելոյենց տուն: — Ինչքա՞ն տխուր հնչեցին այս բառերը: Մայրս շորերը կիսահագնել, իր անկողնում նստած կարկատան եր անում, մի կողմից ել արտասուքները դրոբվելով, կաթում եյին նրա զթի ծայրից: Արդեն յես հասկացա, վոր պիտի Մելոյենց տավարը հանդը տանեմ:

Մելոյենց բազում ինձ սպառում եյին

Թվով տասներկու փոքր ու մեծ անասուններ։
Տասս յեթե տեսներ մեր յեղները, վոր հորս
գինվոր դնալուց հետո ծախեցինք Մեկոյին,
հորս անունը կտար ու լաց կլիններ. բայց այդ
անասունների մեջ վոչ մի յեղ չկար, յերևի
մեծ հոտաղ Պողոսը գութան եր տարել։ Մեկոյի
հարսը տեսնելով ինձ ու տատիս, ծալտալով
մոտեցաւ։

— Յեկավ սղտիկ հոտաղը։

Մենք ձայն չհանեցինք,—

— Պա՛, գրքերն ել հետն ե բերել,—չո-
չաիեց ուսիցս կախած տոպրակը։

— Զոլում գիրք չեն կարդա, բալես, տա-
վարը կկորցնես,—նա շոյեց գլուխս, ապա
դարձաւ։

— Արի, արի, քեզ կարող տամ, հացդ
կապի, տավարը դուրս քշի։ Որը ճաշ դա-
ռաւ։—Նա նայեց նոր ծաղած արեւին։

Յես ու տատս հեռեցինք նրան։ Սպիտակ
հացի մի մեծ պատառ կարողով տվեց ինձ,
ապա տան անկյուններում սկսեց ինչ վոր բան
փնտռել։

— Ըհ՛, տո ետեղ բեր տոպրակդ,—գար-
ձաւ նա ինձ, տոպրակիցս հանեց գիրքս, տվեց
տատիս, հացը դրաւ աջատեղ։ Տավարը դուրս
քշեցի, նրանք սովոր ճանապարհով արագ-ա-
րագ գնում եյին։ Յես նայեցի գլուղին. բոլոր
տները խառնվել, կպել եյին իրար, դժվար եր
նրանց մեջ գտնել մեր տունը։ Ինչ կարոտագին

հայացքով եյի նայում մեր գյուղին, կարծես հովիտենապես եյի բաժանվում: Գյուղի սրածայր աթարի դեղերով խրճիթները ծածկվեցին բլուրի հետևը: Ինչքան ուրախացա, յերբ մտաիկ դարի հետևից ականջիս հասավ մի եշի զուռ, յերբ նրա ձայնի արձագանքը կորավ հեռու լեռներում՝ «Ձա՛ն», —ասացի սրտիս խորքից, ու տավարս քշեցի դեպի ձայնը:

Անասունները խառնվեցին իրար, ինչպես վաղեմի ծանոթներ, զուացող եշը, վորին ամենից շուտ նկատեցի, ցցած ականջները կախ ցցեց ու տխուր հեռացավ՝ իրեն ընկեր չզուտելով:

— Գաղտ հե՛յ,

Մտաիկ առվի թմբան հետևից վեր կացավ մի հասակալոր մարդ: Յես այդ մարդուն մեր գյուղում չեյի տեսել և կասկածեցի, վոր այդ հասակին կարող ե նա տավարած լինել, բայց հակառակ իմ կասկածների, նա շատ սիրալիր վարվեց հետս:

— Ինձ սանահեր Գևո կասես, —ասաց նա, ամեն որ ես դարի մտտ իրար կհանդիպենք. ուրիշի հետ չտանես, մեղք ես՝, մինչ իրիկուն տավար դարձնել կտամ:

Գևոյի համար շատ հաճելի յեր յերևում իմ ընկերությունը, բայց յես ուզում եյի նրանից ազատվել: Այդ ցանկությունս ավելի ուժեղացավ, յերբ յես ծանոթացա բոլոր հոտադներին ու հանդին: Գևոյի հետ լինելով, յես զրկված եյի այն կայտառ խաղերից, վոր

կատարում եյին իմ հասակին մյուս հոտաղ-
 ները՝ բաց դաշտերի վրա: Գլենն չէր ուզում,
 վոր մեկ ուրիշը մեզ ընկեր դառնա. ընհան-
 րապես խոսափում եր մարդկանցից, սիրում
 եր դաշտը, առունների ափերին, բլրակների
 վրա մենակ նստել: Գուցե այդ եր պատճառը,
 վոր հոտաղները նրան պատահելիս, աշխատում
 եյին ձեռք առնել, ջղայնացնել, անդադար գո-
 ռալով նրա մականունը՝ «դալի քո՛ւ, դալի
 քոո»: Գլենն կարծես չէր լսում, շտապով տա-
 վարի գլուխը թեքում եր մի կողմ ու հեռա-
 նում եյինք: Յերբեմն սաստիկ տխրում եր
 Գլենն՝ այդ մականունը լսելիս: Հոգատար եր
 Գլենն խաղեյինիս կովերին. ամեն իրիկուն
 ըլանում եր նրանց կուրծք. դրա համար ել
 խաղեյկաս — Նուշիկ մայրիկը ինձ դադտնի
 ասում եր, վոր Գլենոյի հետ տանեմ տավարը:
 «Գլենն լավ, խղճով մարդ ե, քեզ լավ կպա-
 հի», — ասում եր նա: Բայց Նուշիկ մայրիկին
 լսելով չէր, վոր յես Գլենոյին ընկեր դառա:
 Նրա ծանր ու տխուր մեղանխուլիկ բնավորու-
 թյունն ինձ դուր յեկավ, յերբ յես ել միշտ ու-
 նեցա՝ տատս մեռավ, մայրս ել գնաց վորբաս-
 նոցներում աշխատանք գտնելու:

Գլենն յերեսունըհինգ տարեկան կլիներ.
 յես զարմանում եյի, թե ինչու նա այդ հասա-
 կին դեռ տավարապահ ե: Միթե նա տղա չու-
 նի, հարցնում եյի ինքս ինձ, բայց հետո իմա-
 ցա, վոր վոչ միայն տղա, այլ և կլին չունի,

խսկի տամլարն ել իրենը չի՝ իր յեղբոր տղերքինն ե:

Դեմքին նայելով, կկարծվեր, վոր Գևոն առանց աղոթքի հացի չի նստի, բայց յոթ տարի նրա հետ ընկեր յեղա, շտեսա նա յերեսին խաչ հաներ, կամ թե չե վորոտի ու կայծակի ժամանակ «մեղա ասու» ասեր:

Գևոն ատում եր որենք, իշխանություն, ժամ, տերտեր, իսկ աստծուց քիչ վախենում եր:

— Անիմանալի յե աստծու բաները, — ասում եր նա:

Գլորվող ամիսներն ամբացնում եյին մեր մտերմությունը: Մի անգամ Գևոն իր յոթ որվա աշխատամարձը՝ — անթառամ ծաղիկներից գործած մի պսակ՝ ինձ տվեց ու ասաց. «Ի՛ր Մելոյի սենյակը՝ կհարցնեն ասա, — յեո եմ գործել,»: Այդպես ել արեցի, Նուշիկ մայրիկը հարցրեց — Գևոն ե գործե՞լ, ասացի՝ — «վոչ, յես եմ գործել»:

Աշնան քամին դաշտերի վրա մեզ պատմում եր ձմռան մասին: Իրիկունը գյուղ գնալիս, նորանոր անուններ եյի լսում՝ «բալչովիկ, Լենին»: Խաղեյինիս տղեն՝ գլավի Մարտինը, շատ խստասիրտ եր յերևում տանը: Գևոյին հարցնում եյի՝, — ինչ ե «բալչովիկը», — ետաքեզնից լսեցի, — ասում եր նա: Այդ խառը որերին ել Գևոն շատ հանգիստ եր: Մի առաջնորտ արեկող յեղած բլբի լանջին մի քարի տակ, շատ գուրեկան սրնդի մեղամաղձիկ

դայլայլ լսեցի. այդ ձայնը կարծես համաքում
ու խտացնում եր իմ տասներեքամյա կյանքի
բոլոր տխուր եջերը: Այնքան հմայիչ եր այդ
ձայնը, վոր ուր ել լիներ, պիտի գտնեյի: Կես
ժամ եր, ման եյի գալիս: Մեղմ ջամին խան-
գարում եր ճիշտ ուղղությունն իմանալ:
Չայն տվեցի Գևոյին—չկար. նվազը լսեց: Յես
Գևոյին տեսա անասունների առաջը պառկած:

— Լսեցի՞ր նվազը, — հարցրի նրան:
Գլխով դրական նշան արավ: Յերեկոյան տուն
գնալիս յես նկատեցի նրա թևի տակ սրինդ:
Շատ տարորինակ եր Գևոն, ինչո՞ւ, ամեն տա-
րի, մեկ դարնանը, մեկ ել աշնանն եր նվա-
զում, այն ել մի որ. և մի անգամ:

2.

Մեյոն հիվանդ եր:

— Վո՞նց ե, խո Նուշիկը չի տխրում մար-
դու հիվանդության համար, — հարցնում եր
Գևոն.

— Չե, ինչու պետք է տխրի, ծեր մարդ
ե, հիվանդացել է, պետք է մեռնի ելի, — պա-
տասխանում եյի յես: Չարմանում եյի,
թե ինչու Նուշիկը առել է Մեյոյին: Յերկու
իր հասակին կլիներ Մեյոն. վոսկրոտ մի ծե-
րունի, իսկ Նուշիկը իր կրծքի ու դեմքի վրա
դեռ կրում եր աղջկական դժեր: Տասնըհինգ
տարի եր, նա վոչ մի յերեխա չեր ունեցել
Մեյոյից, իսկ Մարտինը — նրա խորթ աղեն՝
վեց-յոթ յերեխա ուներ:

Ձմեռները ժամանակ էյի ունենում ծո-
ղովներ գնալու, մեկ-մեկ պատահած՝ թատրոն:
Գևորգին այդ տեղերում չէյի տեսնում, նրան կա-
րելի յեր միայն իր գոմում տեսնել:

— Ե՛, գարունն էլ չեկա՛վ,—գանգատ-
վում էր նա:

Յե՛վ իսկապես, մեզ, դաշտի դավալկներիս
համար շատ ծանր էր անցնում ձմեռը:

Հունվարի մի ցուրտ որ էր:

Արևը մայր մտա՛վ: Տավարը շրեցի, սլըր-
ծա, վերցրեցի կեղտոտ, խոնավացած գիրքս,
շտապեցի. լիկկայան: Գետինը ճքճքում էր
ցրտից, գաղազած քամին ճյուղը ծեծում էր
փակ դռներին.—մի ծանր բո՛թ ուներ նա իր
բերնին՝ խրճիթներին հայտնելու՝ Լենինը մե-
ռա՛վ: Ո՞ւմ չեր խեղդի հեկեկոցը, ո՞՛վ կարող
էր դրանից ամբիլին ասել: Հեղկոմի դռան կար-
միր դրոշակի շուրջը սև ժապավեն էյին կա-
րել:

Լիկկայանում հավաքված տղաները ցըր-
վեցին՝ աչքերը սրբելով: «Լենինը մեռա՛վ»:

Յես գնացի Գևորգին հայտնելու ծանր բո-
թը. չե՛ վոր յերբ պատմում էյի նրան Լենինի
ու հեղափոխութեան մասին լիկկայանում իմ
լրածը, նա սիրով լսում էր ու մի անգամ էլ
ասաց.

— Յես շատ եմ սիրում Լենինին, եղ ինչ
տեսակ մարդ է յեղել, վոր եղքան հավատա-
րիմ ընկերներ է ունեցել, վոր նրանց հետ թա-
գավորից յերկիրն առա՛վ:

Ներս մտա գոմը՝ Գևոն սրինգն եր թըր-
ջում:

— Լենինը մեռել է, Գևո...

Նա ձայն չհանեց «միթե՞ մոռացել է Գե-
վոն, թե ով եր Լենինը»: Նրա անտարբերու-
թյունը շարժեց իմ զայրույթը, բայց ահա
նստեց նա ծալալատիկ ու նվազում է իր ախուր
յերգը՝ «Չորան բայաթի»...

Յերբ գոմից դուրս յեկա, յեղբոր աղի
կինը հարցրեց.

— Ինչո՞ւ յեր Գևոն նվազում:

— Լենինը մեռել է, — շշնջացի յես ու
դուրս յեկա փողոց:

Ինձ թվում եր, թե ամբողջ աշխարհն,
առանց բացառության, սուգ է մտել: Մեկը
պիտի բացառություն կազմեր և այդ մեկը
պիտի Գևոն լիներ, բայց նա յել իր ախուր
յերգը նվազեց: Մակայն մեծ յեղամ զարման-
քըս, յերբ Մելոն իր հիվանդ. տեղով իր աղա
Մարտինի հետ ժպտալով եյին խոսում Լենինի
մահվան մասին: Այդ որվանից յես նրանց իմ
թշնամին համարեցի և այն ժպտալու բուպլին
քիչ եր մնում հարձակվեյի նրանց վրա ու ինդ-
դեյի: Այդ մասին մի քանի ոք հետո պատմե-
ցի Գևոյին:

— Նրանք վոչ կառավարությանն են սի-
րում, վոչ ել Լենինին, — ասաց նա: — Յես ել,
ճիշտ է, կառավարությանը չեմ սիրում, հա-
մա Լենինին սիրում եմ:

— Ախր ինչի, — վիրավորված հարցրի

յես. չե՞ վոր նա բատրահներն, բանավորներն և
չքավորներն կառավարությունն է:

— Ե՛, ինչ անեմ, վոր ելի հարուստը
մնացել և հարուստ, վոր ելի նա կարա փողով
եր ուզած դործն անել:



Մելոյի մեռնելու որը դարնան արևն ա-
հադին բարձրացավ, նոր տավարը դուրս քշե-
ցի: Փողոցում, թե հանդի ճանապարհին, ով
ինձ պատահեց ասաց.

— Այ, նոր Գևոն կառնի խաղեյինիդ
կիկան՝ Նուշիկին, դնա աչքալույս տար:

Տարիների ընկերությունը մեզ դարձրել
եր հասակակիցներ, յես Գևոյին ուղղակի Գևո
եյի ասում և վոչ թե քավոր Գևո, ինչպես
ինքը պատվիրեց առաջին հանդիպման որը:
Գևոն առանց ինձ հեռու չեր գնա. ծանոթ դա-
րելի մոտ գտա նրան: Հարցրեցի, թե ինչու
դյուրացիներն այդպես եյին ասում և արդյոք
մտադի՞ր է ինքը Նուշիկին առնելու:

Գևոն սկզբում չեր ուզում վոչ մի խոսք
ասել, շատ վոր խնդրեցի, պատմեց:

— Չորան եյի, սիրում եյի Նուշիկին, նա
յել ինձ: Առանց նրան տեսնելու առավոտ-
յան վոչխարը գյուղից դուրս չեյի հանի, ի-
րիկունը ջնելու չեյի գնա: Ամբողջ ցերեկն իմ
սրնով ձայնը չեր կտրվում սարերի դռչերից:
Նվազում եյի Նուշիկի սիրուն:

Յերեք վոչխար եր Նուշիկի հոր կարողությունը: Աղքատ եր նա:

Մի որ ել վոչխարներն առաջ անելիս, Նուշիկն ասաց. «Մելոն հորս շատ փող ե տրտվել, ինձ ուզում ե»: Լեզուս կապվեց: Ինչ պե՞ս թե քառասուն տարեկան, վորքևայրի Մելոն Նուշիկին ուզում ե: Մելոն հարուստ եր՝ իսկ յես տանը մի մայր ունեյի, տալը վոչխար: Դազանակն ու սրինգն եր իմ կարողությունը: Խոստացա, վոր այդ տասը վոչխարն դւ մի տարվա աշխատանքս կտամ. չհամաձայնվեց Նուշիկի հայրը: Մելոն քյոխվին փող եր տվել, նա յեւ կանչել, ահ եր տվել Նուշիկի հորը: Մի իրիկուն ել ինձ կանչեց քյոխվեն, լամ ծեծեց ու ասավ. «եւ եդ աղջկս անունը չտաս»:

Մախեցի տասը վոչխարը, դազանակն ու սրինգս մնաց: Բաց թողեցի վոչխարներն ու փախա սարը, ինչ ել լինի, ասի, պիտի փախցնեմ Նուշիկին:

Մայրս գյուղում սրբերի դռներն եր մաշում, յես սարերի դռները: Մի որ մոտս յեկան մեր գյուղացի յերեք տղա, յերեքն ել ինձ պես ջահել ու քասիր:

— Քո դալի քնկերներն ենք, — յերդվելին նրանք, — արյան գետով կկտրենք Մերիի ճամբեն, վոր չտանի Նուշիկին:

Բացսիրտ, սարերի տղա եյի, սքանց հավատացի նրանց: Մի քանի որ հետս փացինք Նուշիկին փախցնելու: Յես մտա բռկը:

նրանք կանգնեցին ջուշի դռան առաջ, վոր
Նուշիկին դուրս բերեմ, միասին փախցնենք:
Նուշիկն ու հայրը տանը քնած էյին, ուղիցի
համացուկ բանամ դուռը՝ մեկ ել ականջիս
տալարի ձայն հասավ: Ե՛դ իմացա, ամեն
կողմից դադանակներով վրա պրծան...

Այստեղ Գևոն մի պահ լռեց, նրա ձայնը
խղիղեց մի ներքին հեկեկանք, ապա շարունա-
կեց փոխված ձայնով:

— Ընկերներ, — դռուցի, — բայց ինձ չե-
լին խիում արդյոք ընկերներս՝ շորերը փո-
խած: Մի ամսից ավել հիվանդ պառկեցի:
Նայրս ել մեռավ:

Անկողնում պառկած, շատ մտածեցի աչ-
խորհի մասին, թե ինչու ախր ենքան հարուստ
ե Գեւոն, վոր կաշառեց տանուտերին, կու-
բարեց Նուշիկի հորը, վոր գլխավորն ե,
դավաճան դարձրեց իմ ընկերներին: Փող,
փող. չկա ազնվություն, արդարություն,
խղճ, աստված ու սուրբ՝ յերկրի վրա, քանի
կա փող, քանի կա հարուստ-աղքատ: Փողը
դավաճան ե. դարձնում ազնիվ ընկերոջը,
կնճի անդամ... Ե՛հ, ինչ ասեմ...

Ինձ մի կտոր հաց եր պետք, գնացի ախ-
պոր տղերքի մոտ դւ նրանց տալարը հանդ
եմ երում մինչ ետը, հեռու օրենքից, ընկե-
րից մարդուց:

Գեւոն վեր կացավ. մենք գնում էյինք տա-
լաին հասնելու, վոր արդեն բավականին հե-
ռակլ եր մեզնից:

— Յես լսել եմ, Դսոսեց Գևոն մի քանի քայլ գնալուց հետո, — վոր Լենինը ասել ա՛ «պետք է ենպես աշխարհ ստեղծենք, վոր փող չլինի, հարուստ ու աղքատ չլինեն, իմ ասածն ել եղա: Ափսոս, վոր Լենինը մեռավ, նո կաներ, Թագավորին նա շուռ տվեց, յես պատում եմ Լենինին, բայց ես իշխանությունը չի անում նրա ասածը, ելի հարուստ կո, փող կա:

Յես այն որը շատ մտածեցի Գևոյի ասածների մասին և այն մասին, թե ինչու յե Մեղոյի հոտաղն եմ:

3

Համատարածը քայքայվում էր:

Ինձ ուղարկեցին մեր գյուղը՝ կոլլսոզն արապնդերու: Յերեք տարի յեր, դյուղ չէի մտնել: Իմ գնալու մյուս որը Մեղոյի ընտանիքը պետք է հեռանար. Մարախինն աքսորված էր, տղեն՝ Եավարչն եր տան դեկավարը:

Կոլլսոզի գրասենյակում նստած կարգւմ էյի «Հաջողություններից դիւսապտույտ են յեղել» գրքույկն ու սպասում ընկերների ավաքվելուն՝ Վարչության նիստի համար: Գասենյակը լիքն էր կոլլսոզնիկներով:

Ներս մտավ իմ ընկեր Գեվոն: Վեր ապա ու բարևեցի: Այս ու այն կողմից գրմացած հայացքներ էյին թափվում Գեյի վրա: Գիտեմ նրանց զարմանալու սլառուքը, ինչպես է Գևոն սիրտ արել մտնելու այսան

մարդկանց ու ազմուկի մեջ, կամ թե ինչ
չորժ ունի»:

Գևոն ինձ մի կողմ քաշեց ու ականջիս
շնչաց՝ «Նուշիկին հեռացնում եք գյուղից»:
Նա իսկույն չկարողացա պատասխանել, նա-
յցի Գևոյին. շատ տարորինակ եր:

— Իա ի՞նչ անենք, Գևո:

Նա չպատասխանեց ինձ, հեռացավ խոռվա-
ծի պես: Յես հասկացա Գևոյի միտքը: Մի
ժամից հետո Նուշիկին կանչեցի ինձ մոտ. նրա
դժբին միայն տարակուսանք կար:

— Իզուր ես յերկար մտածում. բարեւելուց
հաս դեմեցի յես նրան, — բախտը վճռեւ եւ,
վր դու և Գևոն պիտի ամուսնանաք:

Նա յերկու բառ ստաց՝ «դուք գիտեք» և
հեկեկանքի արցյունքները խեղդեցին նրան:
Այ արցյունքներն իր կյանքի անցյալին եյին
ուղված:

Նուշիկը գյուղից չաքսորվեց Մելոյի ըն-
տախքի հետ: Մի քանի որից հետո նա ու Գե-
վոն ամուսնացան:

Մի քանի որ Գևոն կոլխոզի գործեր,
լու հետևողի դերումն եր, հետո սկսեց կա-
մա-կամաց մասնակցել աշխատանքներին
ու տավոտից մինչ իրիկուն չեր հեռանում
կոլոզի բակից:

— Այ տղա, Գևո, նոր ես ամուսնացել,
դուճիմի տանից պիտի դուրս չգայիր, այն ինչ
կոլիզից չես հեռանում, կատակում եյին Գե-
վոյի յերիտասարդները:

— Առաջ կոչսոզը սիրիք, հետո կնկանդ,
կոչսոզը վոր յեղավ, ամեն ինչ կլինի. թե չե
վոր հիմի թողացիր ձեռքից զնաց, ամեն ինչ ել
կ'գնա, ելի Մելոն կղառնա գյուղի տերը:
Լենինն ասել ա, կոչսոզի միջոցով պիտի անց-
նենք սոցիալիզմ, այսինքն աշխարհի յերեսից
ընջենք կուլակին: Ի՞նչ, կոչսոզն ըսենց լա-
բան ա, — պատասխանում եր Գևոն:

Որվա աշխատանքներից հոգնած, պառկում
եյի հանգստանալու, Գևոն կամացուկ դուռը
բաց եր անում ու նստում կողքիս:

— Հոնչ պիտի անենք, վոր կոչսոզը լավ լինի,
ի՞նչ ե ասել Լենինը և ի՞նչ պիտի անենք մենք:

Յես պատմում եյի նրան, թե ինչ ե ասե
Լենինը և ինչ պիտի անենք մեք: Գևոն ժըպ-
տում եր, նրա աչքերը փայլում եյին հաղթա-
նակող գալիքի վառ լույսերով:

Կոչսոզում խառը դրուժյուն եր տիրում
գրեթե ամեն որ վարչության նիստ եր լինում,
մեկը դիմում եր տալիս, մյուսը հեռանում եր
շատերը յերկվության մեջ եյին, կոնկրետ վո-
մի աշխատանք չեյին կատարում, հավաքվում
եյին գրասենյակ, զոռ տալիս չիբուխների
խոսում, աղմկում եյին: Կոչսոզի բակում
խոտը, հարդը վոտքի հետ զնում եր, ինվե-
տարն անկյուններում թափված կորչում—փչո-
նում եր: Անիութություն, անկանոն-
թյուն եր տիրում գոմերում, անատուններից շ-
տերին սոված — ծարավ եյին թողնում՝ մեք
մյուսի հուսով: Այս խառն օրերին եր, վր

Գևոն սկսեց կոլխոզում աշխատել: Տեղի կոմսոմոլի և կուսբջիջի ուշադրութեան առանցքը կոլխոզի ամբաստնուումն ու կարգավորումն եր. դարնանացանը վրայ եր հասնում: Կյանքը կոլխոզում սկսվեց շարժվել՝ ու մտնել իր յեռուն ընթացքի մեջ: Ամեն ինչ կարգավորվում եր, ո՞վ կարող եր անփութութունն անել:

— Ընկեր, կոլխոզինն ե դա, հասկանո՞ւմ ես, կոլխոզինն ե,— դիմում եր Գևոն այս կամ այն կոլխոզնիկին, վորի անսրտացալ վարմունքը նկատում եր դործի մեջ ու սկսում եր շտկել նրա ծուռը կամ կիսատ թողած գործը: Գևոն մենակ Ֆիդիկական աշխատանք չեր կատարում, նա ինքը հասկացնում եր ուրիշին, թե ինչու լավ ե կոլխոզը և ինչու առանց կոլխոզի չի կարելի կուլակին քել:

— Լենինը չի մեռել, չի, իզուր եյին խընդում կուլակները, ա՛յ, ինչխանութեունը կատարում ե նրա ասածը, հասկանո՞ւմ եք, Լենինն ասել ե, վոր պիտի կոլխոզ կազմենք:

Ո՞վ չե ր դարմանում Գևոյի՝ այդ հայտնադործված մարտիկի վրա:

Գևոն հրացանն ուսին, գիշերը պահակ եր կանդնում կոլխոզի գույքին: Չորս աչքով նայում եր բոլոր աշխատանքներին: Ամեն իրիկուն ինձանից հարցնում եր, թե ինչ կար գրած լրագրում: Ինձ համար արդեն սովորութեուն եր դարձել ամեն որ պատմել Գևոյին թերթում յեղած նորութեունների մասին:

Որե-որ յերկտասարդանում եր Գևոն.
Նա դառնում եր մշտածիծաղ կայտառ մի յերկ-
տասարդ, այդ մելանխոլիկ, մարդկանցից քաշ-
վող ճգնավորը: Նա սիրում եր կյանքն ու որե-
որ ավելի խորանում եր կյանքի պայքարի մեջ:

—Մենք կատարում ենք Լենինի ասածը,—
ասում եր նա,—դրա համար ել մենք չենք
վախենում, թե մեր գործը ձախողվի:

Ահա Գևոն՝ հյուանի հետ մտնում է գրա-
սենյակ:

—Պաշիկ ջան, խառատ եմ բերել, վարձի
համար խոսի հետը, թող արորները, լծները
վերանորոգի: Յերեկ ել չոր ուռենի փայտ եմ
բերել, թող յերկու հատ լուծ շինի, լծները
պակաս են: Յես են հողաճանաչ Ասեյի հետ
գնամ, թող կոլխոզի հողերը ցույց տա, տեսնեմ
վորն է ցանելու, ճանաչեմ, վոր վաղը ցանքան
սկսենք, ուշանում ե: Ահա այսպես եր աշխա-
տում Գևոն կոլխոզի կազմակերպման որերին:

Հիմա նրա կրծքին փայլում է Սոցիալիս-
տական շինարարության մեծ հարվածային
աշխատողի նշանը:

ԽՈՌԱԿԱՆ ՄԱՅՐՈՆ

1

Կոլխոզնիկ Մաթնսը բարկացած, քթի տակին փնթփնթալով, տուն եր դնում:

— Ինչ ե յեղել, Մաթոս ախպեր, — նրա սուսը կարեց Սեթոն:

— Տո ախպեր, — ձայնը բարձրացրեց Մաթոն, — մի որ կոլխոզին շուք արեցի, մոռացած մի մարդս մնաց չոր, մեկել որ ել սելով խոտ կրելիս ակը շարդվեց, իրիկուն ել յեղներին արեցի դոմը, աղերքին ասեցի խոտ տան, չեն տվել: Եդ ե՛ արել են ասելիք, թերթին տվել, թե լավ աչքով չեմ նայում կոլխոզի դուլքին, ջանքեղար եմ, փնթի յեմ: Գեղովի տեսել եք իմ բան անելը, տեղը դա, հաղար եդ տեսակներին փոսիս հետ քաշ կտամ:

Ե՛, ջաղացը կորցրել, չախչախին ես ման դալիս: Կոլխոզ ես մտել, պիտի քաշես: Եդ ասում են, փոր բերքից քեզ բաժին չտան, թե չե յեղներին սոված թողները փաստ չի: Իսկ Մաթոն քթի տակ փնթփնթալով, շարունակեց իր ճանապարհը:

— Հա ելի՛, ^{***} ախպեր, — համաձայնվեց Մաթոն Սեթոյի հետ:

— Վոր խելք ունենաս, չես խարնվի... ասաց Սեթոն իր վերջին խոսքերն ու հեռացավ:

Ավանսի դիմաց կոլխոզնիկներին չուսա
եյին տալիս: Կոլխոզնիկ Արտեմը չուստերը
հագած, տուն եր գնում, պատահեց Մաթոյին:

— Գնա ե, Մաթոս ախպեր, գնա չուսա
ստացի:

Վորտեղի՞ց ստանամ, — ուրախություն
նից շփոթվեց Մաթոն:

— Կոլխոզից, վորտեղի՞ց: Եատ ել լավերն
են, այ, — վոտքը ցույց տվեց Արտեմը: Մա
թոն ձեռքով շոշափեց չուստն ու շտապեց կոլ
խոզի գրասենյակ:

Գրասենյակում հավաքված կոլխոզնիկնե
րի բոլորի ձեռքն ել չուստ կար՝ դանադան
գույնի ու մեծության: Տնտղում եյին ձեռքնե
րում, մեկը մյուսի ստացածն եր հավանում ու
խրենը վատարանում: Մաթոն արագ մոտեցավ
գրասենյակին:

— Մի գույգ ել ինձ դուրս գրի, — դիմեց
նա հաշվապահին: Վերջինս ձայն չհանեց, մի
հայացք ձեռք Մաթոյի դեմքին ու սկսեց թեր
թել «դավթարը» — «Մաթոս Փելյան»: Հաշվա
պահը վրայով մատը սղացրեց ցած, ապա
գլուխը բարձրացնելով, նայեց Մաթոյի դեմքին
ու ասաց, — ընկեր Մաթևոս, դու ցորեն ես
ստացել, քեզ ավանս մնում ե յերկու ոտըլի,
յեթե մի քանի որ ել ավել աշխատած լինեյիր,
քեզ չուստ կ'հասներ:

Մաթոյի աչքերը հիասթափությունից

չովեցին: Հաշվապահը գիրքը դրեց պատու-
հանն ու սկսեց իր աշխատանքը:

— Տո լսիր ե', յերեխա՞ յեմ յես, ինձ խա-
րում ես, եղ ինչի սաղին հասնում ա', ինձ չի
հասնում,— քիչ լուռ կանգնելուց հետո բարձր
ձայնով դիմեց նա հաշվապահին: Հաշվա-
պահը, բացատրեց Մաթոյին, վոր իր աշխոթե-
րի դիմաց յերկու ուրբու ափանս ե հասնում,
մի յերեք որ ել վոր աշխատի, մի դույզ չուստ
կտան:

— Եղ չուստն ըստեղ կմնա՞, վոր յես յե-
րեք որ աշխատելուց հետո դամ ստանամ:

— Զի մնա, ելի կ'բերենք, մյուս անգամ
կտանք:

— Մյուս անգամ կտաք, մյուս անգամ
կաշխատեմ,— Մաթոյի աչքերը բարկությու-
նից ալեւի չովեցին, նա նայեց հաշվապահին,
նայեց ու խոռված դուրս գնաց, «քեզ չի հաս-
նում, քեզ չի հասնում»— բառերը մտքում կրկ-
նելով:

— Այ տղա, Մաթոս, կոչխողնիկները սաղ
թաղա չուստ են հագել, եղ վո՞նց ա, վոր դու
չունես,— հարցնում ե նրան Մեթոն:

— Եես դրանց խորթ զավակն եմ, պարոն
հաշվապահն ասում ա՝ «քեզ չի հասնում»,
մյուս անգամ կտանք»:

— Այ տղա, դարնանից բանում ես, մի
դույզ չուստ քեզ չի՞ հասնում, թե՞ խնամինե-
րին են ատաղ տալիս: Եղ հլա չուստն ե, վոր
ըստենց են բաժանում, բա եղուց բերքը վո՞նց

կրաժանեն... Թուրքերեն առածն ասում ե՛
«Ննասի կեսից յետ դառնալը դարձյալ ոգուս
ե»։ Խելքդ գլուխդ հավաքի, Մաթոս ջան ու
քո պապենական աղ ու հացի ճանապարհը բաց
մի թող։—Մաթոսը լուռ լսում եր Սեթոյին
ու գլուխը հավանաբար որորում։

2

Քաղն սկսվել է։ Մաթոն պարապ պառկած
ե կոոպերատիվի . դռանը, ուռենիների հո-
վում։

— Մաթոս, ո՞ւր ես, չես յերևում, վո՞ր
բրիգադումն ես, ինչո՞ւ չես գնում աշխատան-
քի, — հարցնում ե կոլլսոզի նախագահը։

— Բոբիկների բրիգադիայումն եմ, ընկեր
Արմեն, սրանցով վո՞նց քաղ գնամ, — ան-
տակ տրեխներով վոտքերը վեր ե ցցում Մա-
թոն ու նայում իր շուրջը նստած ու թիկն
տված մարդկանց, վորոնց մեջ աշխատանքի
կարող ձեռք ինքն ե ու Սեթոն։

— Արի, պահեստում տրեխացու կաշի կա,
տար կարի, հազի, աշխատանքից յետ մի ընկնի։
Չես աշխատում, ասում ես՝ տվեք. աշխատի,
վոր տանք, է՛։

— Եղ ով ա անխելքը, ընկեր Արմեն, բո-
լորին յերեք մանեթ կեսով չուստ ես հազցրել,
իսկ ինձ յերկու մանեթով փոստ կաշի յես դեմ
անում, ամառը շողին հազնեմ, չորանա, վո-
տերս յարա անի։ Եղ իմ բանը չի, գնա, յերե-
խեքին խաբի։

Ի՞նչ է պատահել Մաթոյին, — ճայում եր
նրան ու Սեթոյին կոլխոզի նախագահն ու
մտածում: Մի պահ այդպես լուռ կանգնելուց
հետո նա դարձավ Մաթոյին:

— Լավ, արի գրասենյակ՝ մի քիչ խոսե-
սենք, — ասաց ու քայլեց:

— Ձեռ գա, — նրա հետևից գոռաց Մա-
թոն:

— Շատ ճիշտ է ասում Մաթոն, — յերբ
Սրմենը հեռացավ, սկսեց Սեթոն, — մարդու ել
կասե՞ն՝ արի բորելի վնասով, անհախ, մեր հրա-
մանի տակ աշխատի:

— Տո ջանմ, թող ասի ել, գնա ել, ամեն
մարդ իր խելքով է շարժվում:

Կոլխոզի նախագահը չի մոռանում Մա-
թոյին: Մյուս ուրը նրան չտեսնելով աշխա-
տանքի վայրում իրենց բրիգադի մեջ, գնում է
նրանց տուն: Յերկար խոսելուց հետո Մաթոն
համաձայնում է աշխատանքի գնալ: Հենց
Մաթոյի աշխատանքի գնալու ուրը յերեկոյան
ծխող կոլխոզնիկներին ամենքին մի-մի ֆունտ
ծխախոտ են բաժանում: Մաթոն չի ծխում,
բայց պահանջում է, պատճառաբանելով, վոր
ինքը չուշտ չի ստացել, պետք է ծխախոտ
ստանա, տա մաշակարին, վոր իր համար
չուստ կարի: Նախագահը մերժում է Մաթոյի
պահանջը: Բողոքում է, աղմկում է Մաթոն,
խռոված դուրս է գնում ու մյուս ուրն աշխա-
տանքի չի գնում: Այս անգամ Մաթոյին խելքի
յին բերում իր հարևան կոլխոզնիկները:

Մաթոն գնում է աշխատանքի, մի որ կասյ
ե անում, մի որ՝ քաղ, մի որ՝ փոցխ:

— Եղայեա չի լինի, Մաթո՛, — ասում է բրի-
գադիրը, — մի նորյադում, մի աշխատանքի
մնա, վոր իմանամ՝ ես արտը դու ես փոցխել,
կամ քաղել, վոր յեթե փոցխը վատ լինի, ի-
մանամ, վոր դու ես պատասխանատու, թե չե՛
մի գործի կեսը դու յես կատարում, կեսն ու-
րիչը, ո՞ւմ յախիցը բռնեմ, թե վոր գործը վատ
լինի:

— Լավ, — նեղադած ասում է Մաթոն, —
յես ամեն որ գերանդի կ'քաչեմ:

— Քաչիր, — Համաձայնում է նրա հետ
բրիգադիրը: Մաթոն մյուս որը գերանդի է
քաչում, ճաշվա բանթողի ժամանակ Մաթոն
հոգնած, գերանդին նետում է արտի մեջ՝ քաղա-
ծի բերնի հետ ու շտապում բարդոցի հովը,
ճաչում են, հանգստանում: Փործն սկսվում է,
բայց Մաթոյի գերանդին միջից յերկու է յե-
ղել. բարկացել է, հայհոյում է Մաթոն, բայց
ո՞ւմը: Մեկ ել տեսնում են քուլաչը կրող սայ-
լերի յեզներից մեկի վոտքից արյուն է գնում:
— Յեզն է կոտրել, ինչ մեղավոր եմ, — գոռում է
Մաթոն:

Մյուս որն աշխատանքից հետո Մաթոն
կոլխոզի գրասենյակ է մտնում: Կոլխոզնիկ-
ները պատի առաջը մեղվաճանճերի պես հա-
վաքված, բզդում են: Կոմյերիտական Վազգե-
նը Մաթոյին տեսնելով, քահ, քահ, Եփծա-

դում ե ու ձեռքից բռնած քաշում դեպի հա-
վաքված մարդկանց մոտ:

— Տես, —ասում ե նա՝ սլատի թերթի վրա
ցույց տալով մի նկար, — կոտրած գերանդին
ուսին, բերանն անձոռնի բացած, ձեռքը մեկ-
նել ե դեպի դիմացը կանգնած յեզը, վորի մի
վոտքից արյունը թափվում ե: Տակը գրել են՝
Մաթոն անմեղ ե, յեղն ե մեղավոր,
վոր կոտրում ե գերանդին իր վա-
քերով:

— Տո, ախպեր, — ետեղ սաստիկ բարկա-
նում ե Մաթոն, — փոցիս արեցի, վրես խոսե-
ցիք՝ թե որը մի տեսակ աշխատանք մի ա-
րա, — դեմքադրկություն ա, չգիտեմ՝ ինչ պոչ
կայցրիք: Յեզը գերանդին տրորել, կոտրել ա,
փոխանակ տափար պահողին մեղադրելու, ինձ
եք նկատում: Թե թշնամի յեք հետս, ասեք
մի ապրի, մեռի, եթամ մեռնեմ: — Բարկա-
ցած դուրս ե գնում Մաթոն, չլսելով հետե-
վից կանչողներին: Նրան, այդ բարկացած
ժամին, պատահում ե Սեթոն ու խոսելով
գնում են:

Իերքը բաշխում են ըստ աշխորերի, Մա-
թոյին տասնյոթ փութ ցորեն ե հասնում՝
քահնինդ աշխորի դիմաց. հարա-հրոց ե
բարձրացնում, գոռգոռում ե Մաթոն:

— Ինչո՞վ պահեմ իմ վեց նաֆարը:

Նախադահը մի պատասխան ե տալիս՝ —
Աշխատի՛ր:

Իա իմ հողերից տասը սել քուլաչ եք բե-

րել, վոր հինգ խալվար ցորեն կլինի, ես եք տալիս:

Կոլխոզի նախագահը մեղմ ձայնով նրան բացատրում է, վոր բերքը աշխորերի շխմաց են տնալիս և նկատի չեն ունենում, թե նրա հողերից ինչքան քուլաչ է յեկել, կամ քանի յեզ ու սայլ է բերել կոլխոզ, նրա այդ յեզ ու սայլի փողը տարեկան հինգ տոկոս իրեն կտան, մինչև վոր կվերջանա, կոլխոզը դա այնպիսի տնտեսություն է, ուր ապրելու համար պետք է աշխատել և վոչ թե ուրիշներին լսելով, աշխատանքից խուսապել, խոռովել ինքնաքրնահաղատությունից:

Մաթոն մի քիչ մեղմանում է նախագահի բացատրություններից հետո՝ «լավ, շատ կաշխատեմ, շատ կստանամ, թող աշխատանքի անսովոր մարդը մտածի»,—մոմում է նա մըրքում ու սկսում է տուն տանել իր հասանելի ցորենը:

— Սյ մարդ, ե՞ս ե մեր ամբողջ տարվա ուտելիքը, —հարցնում է նրան կինը:

— Քիչ եմ աշխատել, քիչ են տվել, ջթի տակին սլատասխանում է Մաթոն, սրտանց լիովին համաձայն շլինելով դրան:

— Հ՞ը, վո՞նց ելավ, —հարցնում է նրան Սեթոն: — Վոր ասում եյի քեզ բան չեն տա, յեզդ, սելդ, հողդ քրեցիլ կոլխոզ, սաղ տարին բանեցիր տասնը յոթ փութ ցորենի, մի քանի ֆունտ դարու համար: Մենք նրանցը չենք, չե՛, մեզ նրանք բան չեն տա, — յեզրա-

փակում եր խոսքը Սեթոն ու իր մանր պլպլա-
ցող աչքերը հառում Մաթոյի դիմքին:

— Չանձ ել, խոսայն ավելնորդ ե, եթանք
մի դիմում գրի, յես կոլխողից հեռանամ,—
նրա պահանջկոտ հայացքից ազատվելու հա-
մար պատասխանում ե Մաթոն:

— Մաթեոս ջան, դիմում գրելը հեշտ ե,
գրել կ'տամ, յես վոր գրեմ, ձեռագիրքս կճա-
նաչեն, բայց սիրոս ցավում ե նրա համար,
վոր ամբողջ տարին աշխատել տվեցին քեզ ու
վոչինչ չտվին, ախոս դու, ասեցի՝ շուտ հե-
ռացի, չլսեցիր:

Կոլխողի վարչությունը քննելով Մա-
թոյի դիմումը, չհեռացրեց նրան, չնայած մի
քանի անդամներ պնդում էին, վոր պետք ե
հեռացնել: Կոլխողի նախագահը հանձն թռայ
նրան խելքի բերել: «Պետք ե նրան ազատել
թշնամու ճանկերից»,—ասում եր նա:

— Ճիշտ են ասում այն ընկերները, վոր
Մաթոն թափթփված բնավորություն ունի,
դիպցիպլինայի սովոր չի, նա իր անհատական
անտեսության մեջ գերանդի ել ե կոտրել,
սայլ ել, բայց վոչ վոք նրա վրա չի խոսել,
իհարկե գծվար կլծվա նրան, յերբ այսոր աչդ
«չնչին» բաների համար իր վրա խոսում ենք,
նկարում ենք թերթում: Մենք Մաթոյին կսու-
վորեցնենք մեր դիպցիպլինային ել, քննադա-
տությանն ել, միայն պիտի փակենք նաև այն
բերանը, վոր նրա ազանջին վատ բաներ ե
փափսում:

Մաթոն Հեռանալու Համար տված դիմումից Հետո շատ մտածեց, թե ուր գնա, ինչով ապրի: Ճար չեր գտնում: «Ախպեր Սեթոն վոր ըտենց խոսում ե, ախր ինքը շատից-քչից ունի, ախր յես ամեն ինչ դրեցի կոլխոզում ու դուրս եմ գալիս, ի՞նչ պիտի անեմ: Հրեն թեզոն, Թաթոսը, իրենց քեֆին աշխատում են, ամենից ել շատ բերք ստացան: Ուրիշներն ել նոր են կոլխոզ մտնում: Ո՞ւր եմ գնում յես: Ախր վոր յես չլսեյի Սեթոյին, շատ աշխատեյի, շատ ել կստանայի: Այսպես տարակուսանքի մեջ եր Մաթոն, վոր կոլխոզի նախագահն այցելեց նրան:

Մի քանի շաբաթ շանցած, Մաթոն ամոթից վախվսելով, նորից կոլխոզի բակը մըտավ:

— Ե՛յ, խոտվիան Մաթո, — դիմեցին նրան կոլխոզնիկները, — մարդ ել իր սեփական տանից կխռովի՞, կլսի՞ իր թշնամիներին: Դե, գնա, գնա գրասենյակ, թող քեզ Համար ել ցախ ու ցան դուրս դրեն, վոր ձմեռը չմըրսեր: Համա պիտի դաս աշխատես Հա՛, դրա դիմաց չասես, թե կորխոզում յեզ ու սայլ ունեմ:

Մաթոն քթի տակին ինչ վոր բան ասաց. նա ամաչում եր բարձր ձայնով խոսել ընկերների Հետ կամ նայել նրանց ծպտացող աչքերին:

„ՎԱՅ ԲՈՒ ՑԻՐԱՅՈՒ ՂԱԶԱՐԻ“...

Քառասուն տարեկան կլինի Հորոս ապերը, լեկ բեխերի մեջ սպիտակ մաղ չկա, մի յերկու հաս ջուհիների մոտ են: Ով ել նայի նրա դեմքին, ուղիղ կասի նրա տարիքը, կարծես ճահատին գրած լինի:

Այս մի տարի յե, կոլխողում ե, ինչ անծանոթ անուն ասես, վոր նա չի լսել: Շատ բան սխալ ե հասկացել, անցել են որեր, ամիսներ, նրան ասել են, վոր դա սխալ ե, լայլ չես հասկացել, բացատրել են ուղիղը, բարկացել ե Հորոսը, վոր «ամեն որ որենք են փոխում» ու չեն թողնում, վոր ինքը հասկանա: Մի որ ել Մկոն նրան մի խամ անուն տվեց, — ասաց «Արի սոցմրցում անենք»: Շատ բացատրելուց հետո Հորոսը հասկացավ, կնքեց ին պայմանագիր, վորի մեջ մի կեան ել ասում եր, — վեց ամսվա ընթացքում դառնալ գրասենյակ:

Հորոսը գիրքը թեվի տակ, տետրակը գրապանում, դպրոց եր գնում: Մի որ ել տուն գնալիս, փողոցում պատահեց Ղազարը,

վորն իրենց գյուղի ամենահին գրագետ
մարդն է:

— Ա՛յ, Հորոս, եղ ի՞նչ բանի ես:

Հորոսը թե՛ ուզում եմ գիր սովորեմ, մեր
իշխանության դեկրետները կարդամ:

— Ը՛հ, բանդ կտրվի, — գլուխն որորում
է Ղազարը: — Ձոր ուռը կ'ծովի՞:

— Ձե՛:

— Ձե՛ ու ջան, բա քու արածը չոր ուռ
ծոեւ չի՞: Բանի՞ տարեկան ես:

— Եսս վտաքս դնում եմ քառասունը մե-
կի մեջ:

— Գործ գաի ջեզ, գո՛րծ, վոք յերեխա
պահես. ասաց Ղազարն ու շարունակեց իր
ճանապարհը:

Մյուս որը դպրոցում ուսուցիչը կարդում
է «Հորոս Կարապետյան»: «Չկա՛», — ձայն են
տալիս դասընկերներն ու նայում աջ ու ձախ:

Յերրորդ որը՝ «չկա՛»:

Յերրորդ որը՝ «չկա՛»:

2

Մի որ եւ բրիգադիրը գանդատվում է
կոլխոզի նախագահին, թե՛ «Հորոսը աշխա-
տանքի չի գալիս»:

— Ա՛յ, Հորոս, — հարցնում է նախագա-
հը, — ինչի՞ աշխատանքի չես գնում:

— Ե՛հ, յեսիմ, հնգեր նախագահ, հի-
վանդ եմ, քեզ չունեմ:

Անցնում ե մի շարաթ:

— Հ'ը, Հորոս, Համաքսար, Հես ուղում
գնալ աշխատելու, այս տարի վոնց պիտի լինի
քու բանը, ութը շունչ ես, բերքն ել աշխորե-
րի յենք բաշխելու, վոնց պիտի պահես
գրանց:

Անցնում ե մի շարաթ: Մի որ աշխատում
ե Հորոսն ու ելի չկա:

3

Իերքի բաշխումն ե:

Կոլխոզնիկները դատարկ մեշոկները
թևների սակ մտնում են կոլխոզի բակը, վո-
մանք ել լիքը շալակած, դուրս են գալիս:
Հորոսն ել միջանի մեշոկ թևի տակին շոա-
պում ե՝ «սրանք վոր հերիք շարավ, կտանեմ
տուն, կդատարկեմ, ելի կգամ»,—մտմտում ե
նա քթի տակին ու արագացնում քայլերը:
Մտնում ե ամբար: Իրենց հարևան Մայիսը
յերկու շունչ ե, հինգ մեշոկ ցորեն ե ստացել՝
յերկու մեշոկ կարտոֆիլ, դեռ հաշվապահն
ել փողն ե հաշվում, վոր տա:

— Իմս հաշվի, իմս,—Հորոսն ուրախա-
ցած դիմում ե հաշվապահին:

— Ես բոպեյին,—ասում ե հաշվապահը
ու բաց ե անում «դավթարը»:

— Ինը փուլ ցորեն, յերեք փուլ գարի,
չորս ուղբլի փող, վեց փուլ կարտոֆիլ,—
կարդում ե հաշվապահը բարձրաձայն:

— Ինչ ե խոսում,—զարմանում ե Հորո-

սը, — իմ դրացին՝ Մայիսը յերկու նաֆար և,
ենքան ստանա՞ :

— Ինչ նաֆար, այ Հորոս, — նրա խոսքը
կտրում է բրիգադիրը, — բերքն աշխատանքի
յենք բաժանում, աշխատանքի: Հորոսը շըշ-
մում է... — «Վոնց թե աշխատանքի»...

— Վա՛յ, քու տիրացու Ղազարի... —
հայհոյում է Հորոսը, մեշոկները գցելով ամ-
բարը, դուրս է գալիս: «Բա ախր եդ շանվոր-
դին վո՞նց երասում՝ մի աշխատի, բերքը նա-
ֆարի: Հլա գազոնագիրքն ել կշտիս կար-
դաց:

Մրմուռում է մտքում Հորոսն ու շվար գնում,
թե ուր, ինքն ել չգիտի:

1931 թ. Կաբրի գյուղ

ՊՐԻՄՈՒՍԸ

Արամայիսն ուսից բա՛հը վեր առնելով,
դեմ արեց տան դռանը, վոր չծածկվի, ներս
ընկնեն դարնան արևն ու ողբ: Հետո նստեց,
մեջքը հենելով սյանը:

Քիչ հետո ներս մտավ հայրը՝ Հարո ա-
մին:

— Այ սղա՛, բա են կեսն ինչի՞ չես փռել:

— Չեմ փռելու:

— Վոնց, — գարմացամի հայրը:

— Պրիմուս եմ առնելու, — յեղամի վորդու
հանդիստ և լուրջ պատասխանը:

— Եդ ի՞նչ ջուռա բանա, եդ պրիմուսը
բամամ պտի գցի՞:

— Չե, ամի, պրիմուսը կվառենք:

— Վոր վառեցիր, տավարի կուն բամամ
կդառնա՞:

— Չե:

— Բա:

— Ել ինչներիս և պետք բաման: Վոր
պրիմուսն առա, մնացած աղբը պիտի տա-
նեմ, արտը ջլեմ:

— Վայ քո գծի տղա, տունդ քանդվի, դու
մեզ խայտառակ կանես խալիսի առաջ: Լսե՞լ

եո՛ւ՝ վառելիքը տանեն լցնեն արտը, թե՛ ջրում
եմ. ուզում ես մեր նշխարքը հարածե՛ս, մի
կտոր հաց ենք ուտում, են ել գլխներին կարվի
հա՞, թո՛ւ ջու կաթին:

Հարո ամին դռան առաջից վերցրեց բահը
և ուզում եր գնալ: Արամայիսը ձեռքից
բռնեց:

— Ո՛ւր, ա հեր, լախե՛: Վոր պրիմուան
առա, ել եզուցվանից ցան շնք վառի, մինչև
աշնան ցրտերն ընկնելը: Ես յեղածը կմնա և
են դցածի հետ մեզ հերիք կանի:

Տղեն իրեն եր ձողում բահը, հայրն՝ իրեն:

— Այ հալիվոր, հիմի դու ինչ գործ ու-
նես. աստծուն փառք, տան աշխատավորն
ինքն ա, վոնց կուզի, թող ենպես ել անի,—
մեզ ընկավ Հարո ամու կինը—Մարան ջի-
բիրը:

— Վո՞նց թե՛ վոնց կուզե, թող անի: Ու-
րեմն ես տան մեջ յես աշխատանք չունեմ,
ձայնագուրկ եմ, վոնց կուզի, թող անի: Թու
ձեր մասարին, յես ձեր...—Հարո ամին բահը
ձեռքից բաց թողեց, հրեց վորդուն, հայհո-
յանքի կեսը փողոցում լրացրեց ու գնաց:



Փեշերը թափ տալով, Հարո ամին վեր
կացավ աղսախկաշների հետ արևկող ելած
տեղից, մտավ բակը, կանգնած մնաց տան շեմ-
քում: Մայրերը կեռ, թզաչափ, յեռանկյուա-
նաձև կանգնած յերեք յերկաթե ձողերի մեջ,
մի փոքր դոմի չափ բայն եր դրված: Հարսն

ու կինը հոնքերը հավաքած, աչքերը կիսա-
խուփ, ձեռքերը կրծքերին, դեմքերին մի ինչ
վոր անորինակ հրաշքի սպասող մարդու դեմ-
քի արտահայտութուն, նայում էին այդ
«դժբանք», վորի մեջքին ցցված թեշու նման
բանի գլխից գոլորշի յեր բարձրանում: Նավ-
թի հոտը տունը բռնել էր: Արամայիսը վա-
ռած լուցկին մոտեցրեց բարրացող գոլոր-
շուն, վորը չքացավ իսկույն ու կապտավուն
բոցը խշշալով սկսեց իր կլոր պարը թեշու
գլխի շուրջը: Ապա Արամայիսը թիթեղյա
ցանցը դնելով կեռ յերկաթալարի վրա, մորն
տեսց.

— Աղի, բարակ թեթև կնուճը բեր, ինչ
վոր կուզես, յեփի:

Հարո ամին այդ գործողության ընթաց-
քում սառած, կանգնած էր շեմքի վրա. միայն
թեթև ցնցվեց, յերբ գոլորշին բոց դարձավ:
Թու քու սատանի սարքին, մտքումն ասաց Հա-
րո ամին ու մտավ ներս:

— Ես ի՞նչի թունդիրը չես վառում, — դի-
մեց Հարո ամին կնոջը, յերբ վերջինս մի փեշ
կարտոֆիլը կես վեդրո ջրով «բարակ» կնուճի
մեջ լցրեց, դրեց պրիմուսի վրա ու մտեցավ
Հարո խամուն:

— Իա ես ի՞նչ աս, — ասաց կինը՝ մատնա-
ցույց անելով պրիմուսը:

— Ես սպիչկի բոցը բան կեփի, մենք ել
կուտենք: Ի սեր աստծո, են բարակ մավ-
թուլները հմի կկոտրվեն, դրա ուստիցն ել ըս-
տեղ չկա, թե չինել տաք:

Ճըթ, կճուճը ճաքեց, ջուրը թափվելով
հանդցրեց պրիմուսը և ել սկսեց թեչու գրլ-
խից դուրը թարձրանալ:

Բուրբի հայացքը սառել էր Արամայիսի
վրա: Իսկ վերջինս վաղախախի ինքնավստահու-
թյամբ մոտեցավ, վայր. դրեց պրիմուսի
վրայից կճուճը, ասյա դառնելով կնոջն, ասաց.

— Աղջի, Արեքնազ, մի գնա, ես մեր Սի-
սակենց պղինձը բեր, շո'ւտ:

— Ուրեմն զուր եմ հաց կերել, մեծացել,
զատ չեմ հասկանում, վոր ինձ չեք ուզում
լսել, — նեղացած ասաց Հարո ամին:

— Հողս դրա գլխին, մի կճուճ չարժի,
համա դողալական կճուճը կտարեց. բողոքեց
Մարան քիքիբը, տեսնելով իր ձեռքով շինած
նախշուն կճուճի վողբալի վիճակն ու սկսեց
դատարկել, հույս ունենալով, վոր կճուճը
«կծեփի» ու կզցի բանի: Բայց ավա՛ղ, ճեղք-
վածքները շատ եյին ու մի քանի ուղղու-
թյամբ:

— Ելա՛վ, ել ել ինչ դարդ ունենք, մերդ
սող տարին պարապի կճուճ շինելով, դրա
ոգտին չի դա, դու ել կոտպերատիվի դռներին
ավարա ելի: Ել մենք վոչ դարդ ու ցավ ու-
եննք, վոչ ել մեր տանը աշխատավոր ա պետք:

— Եդուց սրա համար մի կատուրկա
կառնեմ, — ասաց Արամայիսն ու մոտեցավ
դռանը՝ նայելու, թե կինն ինչու ուշացավ:

— Հլա մի դու ասա, եդ անտերին ինչ ես
տվել, նոր մեկելն առ, ե՞ր:

— Տաս մանեթ եմ տվել:

— Տաս մանեթ, ջիշա, ի՞նչ կա վոր, մի եշի քուռակի գին, թե մի քուռակ առնեյիր, մինչի աշունքը արածար, ցանքին յերկու փութ սերմ խաղալով կտանեք արար, Հլա ուղում ես՝ եղքան ել տաս՝ կասաուրկա, թե ինչ դահրումար առնես, թագավորի խաղինեն քոնն ա, յա չե ժալովնի ստացող ես, ինչ ուղես, կանես:

Հարսը «պղինձը» բերեց: Սկեսուրը կարտոֆիլը լցնում եր պղինձը:

— Տո, քելի բա՛նը տուր, եթամ յես են մնացած բասման գցեմ, ի՞նչ ես դրանց զուլուղ անում, — ջղայնացավ Հարո ամին:

— Այ հայ, մի հանգիստ մնա, թող մի տեսնենք, ինչա ըլում, հետո խոսա, ելի:

— Վահ, աո յես քեզ յերեխա յեմ, վոր հետո իմանամ, ենա յես առաջուց գիտեմ ելի, ինչա ըլելու, եդ ա, իմ ասածն ըլնում ա: Եղուց ամեն որ դրա մավթուլների ծերից կերակրի ամանը շուռ ա գալու, յա մորդ, յա կնկանդ ձեռքն ու վուտքն երելու ա, դե հմի ել բալնիցեքի ու հեքիմների դռներին քաշ արի: Այ ինչա ըլնելու, ինչա ըլնելու...

Վերջին անգամ «ինչա ըլնելու» բառերը վորդու արտասանած տոնին նմանեցնելով, գլուխը տմբացրեց ու դուրս յեկավ Հարո ամին:

Գարնան արևոտ որն ամպեց ու ցրտեց: Բակերում խաղացող նորածին ուլ ու դառները ներս մտան: Կտրներից՝ խաղացող յերեխաները: Յերկնքի բոլոր ծակ տեղերը, վո-

բոնցից յերեվում եր անսահման կապույտը,
բոնվեցին ամպերով: Անձրեփի կաթիլները
տների յերդկից սկսեցին ներս ընկնել: Հարո
ամին մաշված չուխի փեշերը վրա քաշելով,
ներս մտավ: Նայեց սառը թոնրին, վորի բեր-
նին փալաս անգամ դցած չկար: Միայն խաչ-
յերկաթն ու սալն եյին: Նրան անմարդաբնակ,
սառն ու ավերակ թվաց իրենց տունը, վորի
անկյունում գետնից մի թղաչափ բարձր դրո-
ված կամի վրա շարված ամանների շարքում
պրիմուսն ու կասսուրկենն ծիծաղում եյին
նրա վրա:

— Եղ անտեր սատանի սարքի ձեռիցը
մենք պիտի հիվանդանանք, մեռնենք:

Հարո ամին նայում եր վորդու յերեսին
և վերջինս, վորպես պատասխան հոր հայաց-
քին, ասաց.

— Ինչքան լավ կլիներ, վոր հիմի ոթախ
ունենայինք, փեչը վառեյինք իսկույն:

Այս ասելով, Արամայիսը վեր կացավ, վա-
ռեց պրիմուսը, կճուճներից մեկի խուփը դնելով
վրան, դրեց թոնիրը:

Հարո ամին չեր ուզում կախիլի թոնրի
մեջ, վախենում եր, վոր պրիմուսը պայթի,
իրան վնասի. բայց հետո կախվեց: Քանի
դեռ չեր երեվում, վտառերը խփան վրա յեր
դրել, իսկ յերբ սկսեց երվել, վտառերը կախ
քցեց՝ պրիմուսն առնելով նրանց մեջ: Իու
մի ասի, բոցը խփան տակից դուրս ե գալիս,
Մեկ ել հայհոյելով ամին դուրս թռավ:

— Թու, յես ջու պրիմուս հնարքողի...

տո սատանի ծնունդ, դու ուզում ես մեզ
խայտառա՞կ անես աշխարհի առաջ:

Հարո ամին հարձակվեց, ուզում եր Չար-
դի սլքիմուր. կինն ու վորդին թույլ չտվե-
ցին: Թքեց, հայհոյեց Հարո ամին, դուրս
յեկավ, գնաց դո՞ւր՝ կնոջը հրամայելով.

— Աղջիկ, շալվարս բեր կարկատի, յես
թողնեմ, կորչեմ, ես սատանի ծնունդի յե-
րեսը մնալու չի:

Հոր դուրս դալուց հետո պոռթկաց վոր-
դու զսպլած ծիծաղը, իսկ մայրը դուրս գնաց,
առելով «յերկու քարի արանք եմ ընկել»:

Մյուս որը, յերբ հասակակիցները Թա-
թոսենց Հարոյին հարցնում էյին թե, — «այ
տղա, Թաղա շալվարդ եդ ինչ շուտ կարկա-
տեցիր» — անշուշտ իմանալով բանի էյու-
թյունը, — Հարոն չեր պատասխանում, այլ
մտքում ինքն իրեն խորապես համոզում եր.
վոր ինչքան նոր-նոր բաներ կան, սաղ սատա-
նի բաներ են ու արդար մարդու հետ թշնամի:

Հարո ամին թոնիր վառելու կամ վեր-
ջացնելու սովորական Ժամերին տուն եր
դնում: Նրան թվում եր, վոր տանեցիք չկան,
քոչիլ են, թե չե՝ ինչու մոխրով լի քթոցը
դռան հետևում դրած չի, տան դուռը բաց
չի, ծուխ դուրս չի ալիս. ո՞ւր ե իր շինած
այն փայտը, վոր միշտ դնում էյին դռան ա-
ռաջ, յերբ թոնիրը վառելիս դուռը բաց էյին
թողնում: Դուրս են գցել, չկա, ով ե իմա-
նում: Ինչո՞ւ կինը կամ հարսը բախում չհան-
դիպեցին՝ փեշը լիքը ցանոյվ, կամ ել ինչո՞ւ

չի պատահում հարսին՝ տան հատակը մաք-
րելիս: Տան ողն ել մի տեսակ խոնավացել և
կարծես: Առաջ ամեն որ տունը մտնելիս ա-
նուշ ծխի կամ մի վորելիցե երված բանի հոտ
եր գալիս, իսկ հիմա...

Նա տեսնում էր իրենց մշտական
դործածական կճուճները տան անկյունում
փոշու մեջ կորած: Ուրեմն կերակուր ել չենք
յեփում... Հա,—հիշում էր պրիմուսը: Թու,
յես դրա սատանի սարքին, տես հլա հավն ել
յեկել, Թոնրումն և ձու ածել: Հավարուն օ-
դարձել մեր Թունդիրը, լավ, լավ: Թալիսի
յերդիկներից ծուխ բարձրանա, Թաթոսենց
Հարոյի Թունդրում հափերը ձու ածեն...
տանն ամեն բան խանդարվել և, վոչ կատուն
և յերևում Թոնրի վրա, վոչ կինն և բան օ-
նում, վոչ հարսը, տունը սուսուփուս և: Ո-
դը խաղաղ, վոչ ծուխ կա, վոչ փոշի. մի
տան մեջ վոր բան չանեն, ախր կաղքատանս,
կքանդվի: Տարակուսած մտածում եր Հարո
ամին և նրան Թվում եր, վոր իրենց օտանը
մի դժբախտություն և պատահել և դրա
պատճառը պրիմուսն և:

Մաքան ջիջիրն ել պարսպ հորանջելով
ման եր գալիս—և, ես ել ելավ տուն, վոչ վա-
ռել կա, վոչ քաշել, աղջի մեր տունը մի տե-
սակ վոնց վոր Թալանած ըլնեն, մեր շշերը
(չամփուր) աչքիս չեն յերևում, Թունդրա

փալաար փուչիկը*), զթոցը, իմ կոլչաղները**): Սիրտս կասես մի տեսակ ե: Եղ անտեր պրիմուսի յեփած կերակուրը արտիս դուր չի գալիս: Յես կհիվանդանամ, ասես սիրտս մի վատ բանս դուշտկում:

— Առավոտյան մի թոնդիրը պիտի վառեմ—ասում ե Մարան զիջիրը յերեկոներին, բայց առավոտյան հարան իսկույն պրիմուսով պատրաստում եր, ինչ վոր պետք եր: Մարան զիջիրն ել տեսնում եր, վոր դործ չունի, դուրս եր գալիս հարեանների հետ «մի զիջ» գրից անի: Բայց տեսնում եր, դեռ բանից չեն պրծել: Բա միայն յե՞ս եմ բեղուդուրի պես ձեռքերս ծալած նստո՞ւմ: Հարեաններս սաղ որն աշխատում են, եղ ինչ դուլում եր պրիմուսը մեր գլխին: Յես բան չունենալով կհիվանդանամ, մինչև ամառը բանը դուրս գա: Քա, եղ անտեր պրիմուս վառելն ել շտվորեցի, ամեն ինչ հարան ասնում: Բա յես ել ինչ եմ ասն մեջը՝—մտածում եր Մարան զիջիրը, իսկ յերբ նստում եր գրույցի հարեան պառավների հետ, ասում եր:

— Հարսս շերեփը ձեռքիցս առել ա:

— Վայ հողերն իմ գլխին, ո՞վ ասեսել՝

*) Փուչիկ—առվարի աղբից շի՞ած ցիլինդրի նման բան ե, ըանեցնում են դյուղերում՝ աղը թափելու համար:

**) Կոլչան—չին շաբից թեվոցներ. հազնում են թոնիրը վառելիս:

մի տարվա յեկած թագա հարսն սկեսուրի
ձեռքիցն առնի շերեփն ու տան բալանին, ե-
լած, չեկած, ամանների բերանները իրան
դլխու բանա, ծածկի... Վայ հողը մեր դըլ-
խին, բեդուդուր բան ա, բեդուդուր, —ասում
եյին լսողները Մարան քիջիրին:

Հարս ու սկեսուր յերբեմն իրար հետ լեզ-
վակովի եյին բռնվում:

— Գլուխը բաց են դուրս ընկածներից
ես, —ասում եր սկեսուրը:— Յեկար, չեկար,
տան ամեն ինչը ձեռիցս առար, մարդիդ սո-
վորեցրի՛ր՝ եդ զահրումարն առավ, տուն բե-
րեց, մհանա դառավ քեդ, թե կեսուրս չի
կարում վառի: Հալբաթ վոր սատանի բա-
ները, սատանեն կիմանա, հլա մի դուրս արի
քուչեն, տես ինչ են ասում: Հարս ա դարձրել
իր առաջին, մի կտոր հաց տա ինքն ա, չտա,
ինքն ա:

Հարո ամին տեսնում եր կնոջ ու հարսի
վեճը:

— Եդ սատանի սարքն իմ տունը քան-
դելու ա, մեր տան մեջ խորթություն ա
դցել, —ասում եր նա:

— Այ կնիկ, — Հարո ամին յերբեմն խո-
սակցություն եր ունենում իր կնկա հետ, —
եզուց զատիկն ա, զանգերը կզարկեն, սադ
հարեանները թունդիրները կվառեն, մենք ել
պրիմուսը վառե՞նք: Ախր զանգերը դարկում
են, վոր թունդիր վառենք, վոչ թե պրիմուս:
Եդ հլա դենը մնա, պրիմուսի վրա, ախր, քա-
նի՞ տեսակ զատ ետ յեփելու, մի տեսակ, չե՞:

Բա վոր եղ որն ել մի մարդ յեկամ մեր տու-
նը, խայտառակ կլինենք ախր: Ախր եղ ան-
տերը սկի հայ քրիստոնի բան չի, եղի չին-
ված ա գերմանու յա ուու միլլաթի համար,
վոր որենը յերկու ձու յա ուտում, վրադ ե-
թում զործի: Ախր տես ե՞, ինչ եղ անտերը
բերել ենք, մեր Քրիստոսի ձեռքի աղլուխը—
կատուն ել աչքիս չի յերևում, չունքի սատա-
նական բաներիցը փախա ա:

— Ես ի՞նչ դերաններ են,—բա՛ւը գնե-
լով պատի դեմը, հարցրեց կնոջը Հարո ա-
մին, վոր նոր պրծամ ու տուն յեկամ «Բա՛յ
դարի տակի արտը նա՞՞») անելուց:

— Տղեդ ա ես որ առել:

— Վո՞նց թե առել, ինչո՞վ:

— Ասումա, վարկայինից եմ փող վեր
կալել:

— Ինչքա՞ն:

— Ասում ե, աղջի քանի՞,—գի՞մեց հար-
սին մոռացկուտ պատամիլը:

— Հիսուն,—քի՞տակին կասաց հարաը:

— Հիսու՞ն,—ու-ի վրա ձայնը հարցա-
կան շեշտով բարձրացրեց Հարո ամին:

— Թու, յես դրա կաթին, բա յես եսքան տա-
րի տուն եմ պահել, վոչ մեկից պարտք չեմ
վերկալել, եղ հիմի պետութունից պարտք
ա անում, վոր գան հողը տան գլխներիս,
յեղները քչեն տանե՞ն:

Հարո ամին նայեց դերաններին:

*)—Յորենի վերջին ջուրը:

— Լամբ, եղ ինչի՞ համար ա առել ես վեցը աթմեն:

— Ասում ա, տան ծածկը պտի քանդեմ, ոթախի տեսակ ծածկեմ, ակուչկա դնեմ, ճմեռը պետք ա փեչ վառենք:

— Այ հողը ըո բերողի գլխին, դու ել հավատում ես: Իա մի տուն, վոր թունդիր չվառեն, առիքը չմրտտի, են տանը բեռով ցորեն կլինի՞, են ա կդառնանք քաղցի Փնտով հաց առնող, ելի՞... Լամբ, եղ պարոնը վոր ըտենց մտածում ա, ոթախում քուրսի չպիտի դնի՞:

— Չե:

— Դե ապա ենա ուզում ա մեզ սպանի, ելի՞, բա դու չես ասում, վոր ակուչկա ես դնում, ախր մի որ ել ելած չելածներս կարբեն, կտանեն, անցող—դարձող, գյարա դուռեքն ել կնդանդ աչքով կանեն: Ոթախն աննամուտի բան ա, յես եղ տեսակ մարդին ինձ ժառանգ չեմ ասի, չե, չե...

Հարո ամին տեղից վեր կացավ, սկսեց բակում գնալ, դալ, ապա մոտեցավ կնոջը.

— Լամբ, եղ ինչի՞ ինձ հեչ հարցմունք չի անում:

— Յեսի՞մ, կարող ա ըեզ ել հարցմունք անի:

— Ել հմի նո՞ր, վոր դերաններն առել, պրծել ա:

— Յես ասի, վոր հերդ հոժար չի վինի, ասի, ակուչկեքի համար, համա խելքի բաներ ա ասում, ասում ա, — ա՛յ մեր, ապրիլից

մինչև Հոկտեմբեր թունդիը չես վառի, պրե-
մուս կա: Մնում ե չորս ամիս, են ել որը
չորս տարթ իրիկուն առավոտ դիր փեջը, վա-
ռի թառ թամուզ, առանց մուխ ու ծխի, ա-
սում ա, քան թե տարին մի ջեջիմ քուրսու
վրա մաշվի, նրա գինը կտանք, ահուշկեքին
ծածկոց կտանենք, ստու շինել կտանք:

— Հմի եղ սաղ գլուխդ մտել ա՞, գեղա-
ցի մարդն առանց թունդիը վառելու յուլա
կերթա՞, են ոջախն ոջախ կլինի՞, վոր թուն-
դիը չունենա, բա եղ ծռի համար են թոնդիըր
սուրը համարում, վրեն ել պսակ անում՝ ժամ
չելած տեղը՞:

Յերեկոյան, յերբ Արամայիսը տուն մտավ,
Հարո ամին անկողնում մեջքի վրա պառկած,
նայում եր յերգկից յերևացող աստղերին:

— Եյ կապույտ յերկինք, — մրմնջաց
մտքում, — բա ել մեր տունը պտի յերգիք
չունենա՞, վոր յես տան միջից քեզ տեսնեմ,
սրանից հետո ոթախի ահուշկեքից բակի աղբ
ոչ գիրլին պտի մտիկ տամ, ախր մեր պապերն
ուզեցել են յերգկով աստծու յերեսը տեսնեն,
չորերը հանելուց արոթք անեն: Իմ տղեն
ախր, ինչի չի ուզում տեսնել, աստված, եղ
ինչ չարք ա մտել նրա սիրտը:

Ու նրա աչքերին պատկերանում եր հրեջի
տեսքով «անաստված», աննամուս, առանց
«սուրբ թոնդի» ոթախը և իրենք մեջը՝ աղ-
քաա ու գերի: Նրա սիրտը տրույրում եր
մտքերի ծանրության տակ ու աչքերը շրա-
կալում եյին:

—Այ վորդի,— դիմեց նա աղին, — եդ
դերաններն առել ես, վոր տունը քանդես, հ^օա:

—Հա:

—Բա, եդ վո՞նց մեր պապենական հին
ոջախը քանդում ես, վոր նորը շինե՞ա: Ենա
թող հինը մնա, դու կողքին նորը շինի,
կտենանք, թե թո շինածը լավ ա, ենա լավ ա,
թե՞ մեր պապենականն ա լավ, բա ել ու՞ր
ես քանդում,— գրեթե լացակամած տոնով
ասաց Հարո ամին այդ խոսքերը:

Արամայիսը խղճաց Վ ուզեց հանդստա-
ցնել հորը:

— Բնի, ամի, ինքու՞ յես հիմկիվանից դրա
համար մտածում, հլա կալից հետո յեմ քան-
դելու:

— Ձեռ ուզում հեռդ խոսեմ, հա՞, լավ ես
անում: Եես ես տանից կթողեմ, կերթամ,
դու գիտես, հորդ դուրս գցի, ջեղ համար
ակուշկեքով տուն շինի, մեջը նստի, պրիմուս
ու փեչ վառի: Մեր տերն ել աստված:

Հարո ամին շուտ յեկավ կողքին, իսկ Ա-
րամայիսը զգալով հոր հողեկան ծանր վիճա-
կը, հեռացավ, ել առանց մի խոսք ասելու ու
պառկեց իր անկողնու վրա:

Միտև որը յերեկոյան, յերբ Արամայիսն
աշխատանքից տուն վերադարձավ, կինը հացն
ու սպասը առաջը դնելով, հարցրեց:

— Ի՞նչ յերեկ պրիմուսը ուրիշ մարդու
չես ասելել:

— Ձե:

— Բա առաջնորդանից ման ենք գալիս,
չկա:

— Ի՞նչ ե խոսում, բա ի՞նչ ե յեղել, հա-
րեվաններին հարցրել ե՞ք:

— Հարցրել ենք:

— Հա՞, բա դուք տանը շնչավոր չե՞ք:

— Ե, լավ ի՞նչ անենք:

— Վո՞նց թե ինչ անենք... Հա, ամուսն հար-
ցրե՞լ եք, — մի գդալ սպաս խմելուց հետո շա-
րունակեց Արամայիսը:

— Հարցրել ենք, բարկանում ե. ասում ե
յնա ի՞նչ գործ ունեմ ձեր սաստանի սարքերից:

Առավոտյան հացից հետո Արամայիսը
դերանների վրա նստած, տրեխներ եր կարում,
կինն սղնում եր նրան, Հարո ամին քիչ հեռու
տանն աչտոի սովերում նստած, փուցխի մատերն
եր շինում: Հունձը մոտենում եր, հարկավոր
եր գործիքները նորոգել:

— Մայիս, պրիմուսը գտա, — ասաց մայ-
րը՝ պրիմուսը ցույց տալով:

Հարո ամին ցնցվեց, — հետո նայեց կնոջը:

— Վորտեղի՞ց, — հարցրեց Արամայիսը:

— Անտեր թուխսը մտել եր աղքատոցը, —
սկսեց պատմել Մարան քիքիցը — քուջուջ եր
արել, դուրս յեկել, ճուտերը մնացել եյին փո-
սումը, ճվճվում եյին: Գնացի ճուտերին
դուրս հանեցի, տեսնեմ թխսի քուջուջը արած
տեղից մի կեռ նավթուլ ա յերեվում, դուրս
քաշեցի, տեսնեմ պրիմուսը:

— Վայ յիս եղ թխսի տիրոջ... խանձուր,

խանձուր, — ուրազը վեր գցեց, մատը բռնած,
դրեթե դռնալույ, վեր թռավ Հարո ամին:

Մի հին շորի կտոր այրեցին, դրեցին Հա-
րո ամու մատին, իսկ պրիմուսը հարսը դրեց
ելի իր կարդոնե արկղի մեջ՝ կամի վրա: Հա-
րո ամին մերթ նայում եր մատին, մերթ պրի-
մուսին:

Քամհար մեքենայի տակից Հարո ամին
քաշում եր գոմադրով պարարտացրված արտի
նուան հատի պես ցորենը:

— Հը, ամի, ցորենը լավն ա՞, թե չե, —
հարցնում եյին հորն Արամայիսը, յերբեմն ել
մեքենա բանացնող Սաքոն:

— Հա, լավ ա, հլա չափենք, կտեսնենք
վոնց կլինի:


Յորենը դարմանից զատեցին, պրծան:
Հարո ամին մեշոկի բերանն եր բռնում հարսի
հետ միասին, իսկ Արամայիսը չափում եր ու
լցնում: Յերբ հիսուն փութը լրացավ, Արա-
մայիսն ասաց:

— Ամի, թեք արտը ամենատատ տարին
եսքան հաղիվ եր տալիս, հմի են մնացածը
տեսնում ես, են ել հո ես չափածի չափ կլինի,
եդ պրիմուսն ա տվել հա՞...

— Պրիմուսը՞, — «ը» — ի վրա յերկարաց-
րեց Հարո ամին:

— Բա, ամի, պրիմուսը:

— Հա, վորդի, ասաված խեք տա պրի-
մուսին... Համա...



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043194

(203)

Фбр '75 б.

A $\frac{I}{7292}$

28

Арм.

2-2325



Г.Л.Б. в Лигр.

А, 1988 г.

Акт № 191

А. Ован

Колхозный рассказы

Госиздат - 1988 - Дривань